№ 103 ԵՐԵՔՇԱԲԹԻ 14 ՄԱՅԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 14 ՄԱՅԻՍԻ № 103

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՊԱՊԻՐՕՍՆԵՐ ԳԱԼԻԼԷԱ „ԿՕՄԷՏԱ“ ԸՆԿ.
ԹԻՖԼԻՍՈՒՄ:
25 հատը—15 կոպ., 10 հատը—6 կոպ. (ե. ու.) 986. 0—40

ՄՇԱԿ

ՄԱՑԻՍԻ 1-Ից ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 7 ՐՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿՐ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:
Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.
1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 բուբլին, ծրիաքար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԴԱՀԼԻՃ
ԱՅՍՕՐ, երեքշաբթի, մայիսի 14-ին, տեղի կունենայ
ԴՈԿՏՕՐ Յ. ԲԵԴԵԼԵԱՆԻ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ
ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ
Նրա Հնդկաստանում կատարած ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ:
Դասախօսութեան ժամանակ ցոյց կը տրվին 80 մոգական պատկերներ Հնդկաստանի, Սէյլոնի տեսարաններից, որոնք մեծ մասամբ դասախօսը ինքն լուսանկարել է ճանապարհորդութեան ժամանակ:
Տեղերի գներն է 3 ր. մինչեւ 30 կ.:
Տոմսակները ծախվում են Արտիստական Ընկերութեան շէյեցարի մօտ, իսկ երեկոյեան՝ դահլիճի մուտքի մօտ:
առ. Սկիզբն է երեկոյեան ժամը 8½-ին 381. 1—1

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
նշանակված է երեքշաբթի, մայիսի 14-ին, երեկոյեան ժամը 7½-ին Ընկ. դահլիճում (Աբաս-Աբադան հրապարակ, № 7 ս. տ.).
ՀԱՐԱՎՈՐՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.
1) Ընկ. կենտրոնի և ճիւղերի 1912 թ. հաշիւների և գործունէութեան քննութիւնը վերատուչիչ յանձնաժողովի զեկուցման հետ և այդ հաշիւների հաստատութիւնը:
2) Մի քանի ճիւղերի նախահաշիւների քննութիւնը և հաստատումը:
3) Ընտրութիւն 2 անդամի «Ներվեան-Նազարեան» գրական ֆոնդի յանձնաժողովի:
4) Ընտրութիւն ուսուցչական ֆոնդի յանձնաժողովի անդամների:
5) Խուզարկեան որբանոցի վերակազմման հարցը:
6) Ընտրութիւն խորհրդի 4 անդամի՝ հերթով հեռացող բժ. Մխիթարեանի, Ս. Վասիլեանի և ինքնակամ հրաժարված Եղիսեմ եպիսկոպոսի և Զ. Մամուլեանի փոխարէն, 1 փոխ-անդամի, վերատուչիչ յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխ-անդամի:
7) Դահլիճի վերանորոգութեան հարցը:
8) Ընթացիկ հարցեր:
(շ.հ.) առ. 366. 3—3

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԹՑԻ և սրտի: Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ԲԱԳԻՒՐ սպրէպարատներով և վիրաբուժական միջոցով ՊՆԵՎՄՕՏՈՐԱԿՈՎ:
Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը:
Զբաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար:
Սօլոլակ, Բէհրութեան փող. № 23 (անկիւն Դանօվսկայայ): Հեռախօս 7—92.
(ա.օ.) առ. 92. 100—70

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻԻԼԵԱՆ
(Նախկին օգնական Կամայեվի)
Ընդունելով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը
Ամեն օր՝ առաւօտեան ժ. 9—1½-ը և երեկ. ժ. 4—7-ը
Զելեմինսկայա փողոց № 4, բն. 3.
առ. (օ.մ.) 129. 50—34

Բ Ժ Ի Շ Կ
ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկարարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:
Հասցէն՝ Բոլշէչեվսկայա № 1.
առ. (կ. ե. հ.) 4. 100—53

Բ Ժ Ի Շ Կ
Յ. Մելիք-Նուբարեան
ներքին և երեխաների հիւանդութիւնների առանձնապէս թոքերի:
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեվմատորակսով:
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր՝ առաւօտեան 12—1 ժ. երեկոյեան 5—7 ժ.
Սօլոլակ, Բոլշչեվսկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմացը):
(հ. հ. կ.) առ. 746. 100—92

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

(Լրագիրներից)

«La Turquie»-ի կարծիքով, Անատոլիայի վիլայէթներում նպատակայարմար կերպով բարենորոգումներ գործադրելու համար անհրաժեշտ է, ամենից առաջ, անց կացնել ճանապարհների հաղորդակցութիւն երկրում, որպէսզի ինչպէս կենտրոնական, այնպէս և տեղական իշխանութիւնների կարգադրութիւնները կատարվեն ժամանակին: Ապա, լրագրի ասելով, հարկաւոր է ստեղծել ուժեղ կառավարական իշխանութիւն և աւելացնել ժանդարմէրիայի կազմը: Ինչ վերաբերում է հողային վէճերին, լրագրի կարծիքով՝ գլխաւոր հարցը կայանում է նրանում, որ քիւրդերը չեն ճանաչում իրաւական կարգ ու կանոն ու դատական ինստանցիաներ, համարելով վիճելի հողերը իրանց սեփականը՝ ֆէօդալական իրաւունքների հիման վրա: Իսկ հայերի վրա նրանք նայում են իբրև ճորտերի վրա: Ուստի և անհրաժեշտ է վերացնել ֆէօդալ կարգերը: Իսկ այն հողերը, որոնք պատկանում են գաղթական հայերին և որոնք յափշտակված են քիւրդերից, պէտք է վերադարձվեն իրանց օրինաւոր տէրերին:

—

«Р. Молва»-ն հաղորդում է, որ Ասիական Թիւրքիան ներմ բանակցութիւնների առարկայ է ներկայումս Բ. Դրան և մեծ պետութիւնների միջև: Լօրդ Մորլէյի Բերլին այցելելու հետեւանք ստացվեց անգլիական և գերմանական քաղաքականութեան ստուգաբաժանումը: Անգլիան իրան գերիշխանութիւն ապահովեց Պարսից ծոցում, խոստանալով Գերմանիային մասնակցել Բաղդադի երկաթուղու շահագործութեան մէջ: Ֆրանսիան Ռուսաստանի հաւանութեամբ պահանջ դրեց կօնցեսիաներ ստանալու Սամսօն-Սըվաղ-Դիարբէքիր երկաթուղու կառուցման համար: Դիարբէքիր-Էրզրում-Տրապիզօն լրացուցիչ գիծը նաւահանգստային կառուցումները Իսնէրօլում և Էրէյլիում: Սև-ծովի վրա: Սըվաղ-Դիարբէքիր գծի նկատմամբ ֆրանսիական պահանջները մերժում են գերմանականի հետ: Անգլիան յանուն Ռուսաստանի շահերի պահանջեց Թիւրքիայից մաքրել Արարատից դէպի հարաւ Ուրմիայի մօտերը ընկած շրջանները: Ռուսաստանի պահանջների մասին ոչինչ յայտնի չէ:

Լրագիրը ապա ասում է. «Լազիստանում և Հայաստանում քաղաքական ազդեցութիւն ձեռք բերելու մասին մտածելու հարկ չը կայ. այժմ իսկ այդ ազդեցութիւնը մեծ է: Ռուսաստանի համար կարևոր է, որպէսզի Փոքր-Ասիայի մերձակայքում բուն չը դնէ որևէ ազդեցութիւն, որ կարող լինի մեզ թշնամի երևալ»:

—

«Р. Слово»-ն հաղորդում է, որ եռապետեան համաձայնութեան պետութիւնները իրար միջև մտքերի փոխանակութիւն են սկսել Թիւրքահայաստանում տիրող դրութեան մասին: Այդ պետութիւնները այժմ ուսումնասիրում են այն բարենորոգումները, որ Բ. Դուռը առաջարկում է մտցնել Հայաստանում: Ուսումնասիրութիւնը հետամուտ է պարզելու այդ բարենորոգումների պիտանի լինելը:

—

Կ. Պոլսի պատրիարքարանի նոր դիմումին, Բ. Դուռը խոստացաւ պատուիրագրել բոլոր վալիներին, պատժել հայերի դէմ բռնութիւն գործադրողներին, ինչպէս և խոստացաւ ազատել Բիթլիսում բանտարկված 13 անմեղ հայերին, որոնց մեղադրում են ռումբերի գործում:

—

«Н. Вр.»-ի Կ. Պոլսի թղթակիցը հաւատի աղբիւրներից հեռագրում է, որ հայերը անպայման սկսելու են յեղափոխական գործունէութիւն, չը նայած «Մ. և Ա.» կոմիտէի սպառնալիքներին:

—

Կ. Պոլսից տեղեկացնում են, որ Լօնդոնի թիւրքաց դեսպան Հակկը-փաշան հաղորդել է Բ. Դրան, թէ Եւրոպայում՝ Հայաստան բարենորոգիչ մանդատով ուղարկելու վրա՝ նայում են այն մարդով, որ Թիւրքիան կամենում է դրանով ժամանակ վատակել և հարցը թաղել: Ուստի, Լօնդոնի դեսպանատոմը ինքն է զբաղվելու հայկական հարցով և իրագործելու է Հայաստանի բարենորոգումները:

—

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տեղեկութիւնների համաձայն, անգլիական Գէորգ թագաւորը ընդունել է Եւրոպայի հայ պատգամաւորութեան նախագահ Նուբար-փաշային և խոստացել է նրան Գրէյի և մեծ պետութիւնների դեսպանների առանձին ուշադրութիւնը դարձնել հայկական հարցի վրա: Այդ պատճառով նոր առաջարկութիւններ դեռ չեն ներկայացվի Բ. Դրանը:

—

Պետերբուրգից հեռագրում են «Рус. Слово»-ին.

«Եթէ բանակցութիւնները Անգլիայի և Թիւրքիայի միջև մի կողմից, և Անգլիայի ու Գերմանիայի միջև միւս կողմից վերջանան նրանով, որ յիշեալ մեծ պետութիւնները ձեռք բերեն Թիւրքիայում առանձին կօնցէսիաներ ու արտօնութիւններ, այն ժամանակ Ռուսաստանը ամեն միջոց ձեռք կառնէ, որպէսզի այդպիսի կօնցէսիաները ոչ մի կերպով չը վնասեն ռուսական շահերին:

«Յամենայն դէպս Ռուսաստանը ոչ չէզոք կը մնայ, ոչ էլ սոսկ հանդիսատես, որպէսզի մեծ պետութիւնները կայուն հողի վրա դնեն իրանց շահերը Թիւրքիայում, և կը վարվէ իր շահերին համապատասխան կերպով:

«Ըստ երևոյթին Ռուսաստանը առանձին հետաքրքրութիւն ցոյց կը տայ դէպի Փոքր Ասիայի հիւսիսում երկաթուղիներ կառուցանելու հարցը: Սակայն, այդ հանգամանքը չէ սպասում այն, որ Ռուսաստանը չի պաշտպանի իր շահերը և այլ հարցերի նկատմամբ՝ մասնաւորապէս հայկական հարցին»:

—

Պետերբուրգից հեռագրում են «Рус. Слово»-ին.

«Պետերբուրգի դիւանագիտական շրջաններում գտնում են, որ անգլօ-թիւրքական համաձայնութիւնը, ինչպէս այժմ պարզվել է, ոչ մի դէպքում չէ հանդիսանում առաջին քայլը Թիւրքիան բաժան-բաժան անելու միջազգային համաձայնութեան վերջանով: Թիւրքիայի այդօրինակ պաշտօնական բաժանումը Եւրոպայի համար, ի հարկէ, ցանկալի չէ, որովհետև նա կը լինի նախերգանքը եւրոպական համերգի պահանջների և ապա եւրոպական պատերազմի սկզբնապատճառ: Պաշտօնական բաժանմանը անշուշտ կը հետևէ Փոքր Ասիայի երկիրների ժամանակաւոր գրաւումը մեծ պետութիւնների ձեռքով:

«Եւրոպական տեսակէտից, որին համարկրծիք է Անգլիան, Փոքր Ասիայում պէտք է ապահովվի ազգային աւտօնոմիան: Փոքր Ասիայի ժողովուրդների—արաբների, քիւրդերի, հայերի եայլն—միանգամայն ազատ զարգացումը հնարաւոր կը լինի միայն այդ ժողովուրդների և թիւրքերի դաշնակցութեամբ, այլապէս՝ Փոքր Ասիային վիճակված է բաժան-բաժան լինել առանձին անկախ տէրութիւնների՝ Արաբիայի, Սիրիայի, Հայաստանի եայլն:

«Ուշադրութեան առնելով, որ Փոքր Ասիայի բաժանումը մեծ պետութիւնների միջև, համապատասխան՝ վերջինների ազդեցութեան շրջանների, անխուսափելիօրէն կը ստեղծէ եւրոպական պատերազմ, եւրոպական համերգը կամենում է, եթէ Փոքր Ասիային վիճակված է բաժան-բաժան լինել, որպէսզի նա բաժանվի, ինչպէս թիւրքական նախկին տիրապետութիւններն էին Բալկաններում, ազգային տէրութիւններ:

«Նկատի չունենալով Թիւրքիայի բաժանումը, անգլօ-թիւրքական համաձայնութիւնը մի նպատակի է ձգտում՝ ամրապնդել Անգլիայի իրաւունքները Հարաւային Պարսկաստանում և Պարսից ծոցում: Այս համաձայնութիւնը հանդիսանում է ուղղակի լրացումն պօղատական ռուս-գերմանական համաձայնութեան, որով Գերմանիան հրաժարվեց մուտք գործել Պարսկաստան՝ պայմանով, որ Ռուսաստանն էլ իր կողմից արգելք չը լինի Բաղդադի երկաթուղագծի կառուցման: Ռուսաստանի այդ տեսակ քայլը տրամաբանօրէն պէտք է նման քայլեր առաջ բերէր Ֆրանսիայի և Անգլիայի կողմից:

«Գտնելով աւելորդ դարձեալ հակառակել Բաղդադի երկաթուղագծին, Անգլիան վճռեց համաձայնութիւն կապել Գերմանիայի հետ այդ հարցի առիթով, օգտվելով նպաստաւոր բօպէից: Այժմ այդպիսի բօպէն հասել է, և Անգլիան մշակեց համաձայնութիւն, որի այժմ Բաղդադի երկաթուղագծին խոչընդոտ չը լինելուն փոխարէնը Անգլիան ստանում է Գերմանիայի համաձայնութիւնը, որպէսզի այդ գծի վերջին կէտը՝ Կուվէյան ընկնի Անգլիայի հովանաւորութեան ներքոյ: Բացի դրանից՝ Անգլիան ստանում է ուրիշ մի քանի արտօնութիւններ»:

—

Կ. Պոլսից հեռագրում են, որ Բ. Դուռը գերմանացիներին տալով երկաթուղային կառուցման կօնցէսիաներ՝ հակառակ է վարվում Ռուսաստանի հետ կապված պայմանագրին, որի համաձայն Անատոլիայի բոլոր երկաթուղագծերը Թիւրքիան պէտք է կառուցանէ իր միջոցներով կամ թէ ռուսաց դրամագլուխներով:

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԱԲՆԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

—

Սղերդ, 5 ապրիլ

Բաղէշի կուսակալի որդին, Մահմուդ-էֆէյ, իր ընկերներով Ղարզան երթալով՝ քիւրդ ցեղապետները յաջողեցաւ հաշտեցնել իրարու հետ, որմէ յետոյ սարսափը սկսաւ. ճամբաները դարձան խլաւ անապահով և կոտորածի երկիրը սկսաւ սաւառնիլ: Սղերդի նորընծայ Հմայեակ քահ., իր հետն ունենալով ժամկոչ և Թէշ գիւղացի Ակուբէ Իւսուֆ, յարձակում կը կրէ Թարընջա Կուսը՝ ըսուած տեղը 3 զինեալ աւազակներու կողմէ, որոնք կը սպանեն Ակուբէ Իւսուֆը ու քահանան կը վիրաւորեն փայտով ու դաշոյնով, մահամերձ վիճակի մէջ, ու բոլոր ունեցածնին՝ դրամ, մաշտոց, զոյգեր կը կողոպտեն: Կառավարութիւնը դեռ բան մը չէ ըրած ոճրագործները ձերբակալելու համար: Այս ու ասոր նման կողոպուտներ, սպառնալիքներ և հարստահարութիւններ անպակաս են ամեն կողմէ: Զարմանալի է որ կառավարութիւնը ոչ միայն չուզեր պատժել չարագործները, այլ՝ անոնցմէ գըլխաւորներուն, ինչպէս են Բշարէ Զաթօ, եղբայրը Զէմիլ՝ Ղարզանի մէջ, Մէհմէդ Էմին Շերուանի մէջ, և ուրիշներ, որոնք տուներ աւերած և ամեն չարիք գործած են երկրին ու ժողովրդին, կայմակամներ և բարձրաստիճան պաշտօնեաներ կը ղրկէ, ներում ու վարձատրութիւններ կընէ, շնորհներ կը խոստանայ: Այժմ ժողովուրդը երկու իշխող ունի. մին՝ քիւրդը, որ կը հաւաքէ՝ ինչ որ կուզէ և կընէ՝ ինչ որ հաճելի է իրեն. միւսը կառավարութիւնը, որ կը հաւաքէ իր տուրքերը ամենախիստ միջոցներով: Այս կացութիւնը անտանելի է այլևս:

—

Բիթլիս, 19 ապրիլ

Մարտ 31 և ապրիլ 2 հեռագիրները կը հաստատենք: Ծանօթ դէպքը կուսակալութեան կողմէ հանրային հանգամանքով հայոց վերադրուիլը կը հերքենք. մեր վիրաւորներու ոճրագործները դեռ չեն ձերբակալուեցան: Խուժանավարները ազատ արձակուեցան. կը խնդրուի, որ դիմում կատարէք, որպէսզի մեր ներկայութեանը կատարուին բանտարկուած 6 հայերու քննութիւնները: Երէկ Մօրկանի Քարաք գիւղի հայերուն և Բիթլիսի մօտ Սիւրէմ գիւղի քիւրդերուն ոչխարները յափշտակուեցան: Դարնան հետ դէպքերը սկսան. այլազգիներուն տրամադրութիւնները ամենուս մտահոգութիւն կը պատճառեն. կացութիւնս խիստ ծանր է:

—

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏ
(Հայկական հարցի քննութիւն)
(նիստ 8 մայիսի 1913 թ.)
I

Միստր Աննան Բրայս . . .

Ես անցնում եմ Այլանիայի և Մօնտենէգրոյի հարցից հայկական հարցին:

Այժմ, երբ Սկիւտարի հարցը լուծվեց, անհրաժեշտ է հասարակութեան առաջ դնել Հայաստանի հարցը: Հաւատացնում են, որ Թրակիայի զօրքերը փոխադրվելու են Փոքր-Ասիա, և մենք գիտենք, միւս կողմից, որ զօրքերը արդէն բանակում են Զմիւռնիայի մօտ և այլ տեղեր: Ծանր վտանգներ կարող են ծագել արձակված զինուորների այդպիսի մի բազմութիւնից, որոնք կը թափվեն մի անպաշտպան ժողովրդի վրա: Այն օրից, երբ փախցրին գործելու առիթը, Բերլինի դաշնագրի ժամանակ, 1878-ին, այսօրվանից աւելի նպաստաւոր բօպէ չէ ներկայացել մեզ հայկական հարցի վերջնական լուծման համար: Բացարձակապէս անհրաժեշտ է յարուցանել այդ խնդիրը պատերազմի աւարտման հետեւանքով առաջացած կարգաւորութեան առիթով: Եւ ահա ինչու:

Երկու պատճառ կայ, որ այդ հարցը յարուցվի. առաջինը՝ բոլոր մեծ պետութիւնների հանուր ցանկութիւնն է պահպա-

նել Ասիական Թիւրքիայի ամբողջութիւնը. բացարձակապէս անհնարին կը լինի պահպանել այդ ամբողջութիւնը առանց որ ապահովված լինի Ասիական Թիւրքիայի քրիստոնեայ ժողովուրդների կեանքի և ապահովութեան հարցը։ Անկասկած է, որ քրիստոնեայ ժողովուրդների կեանքի և գոյքի ապահովութեան պակասութիւնը առաջ կը բերի անդամահատութիւն, ինչպէս այդ պատահեց Եւրոպական Թիւրքիայի հետ։ Մենք ականատես եղանք 50—60 տարիների ընթացքում՝ Թիւրքիայի Եւրոպական նահանգների անընդհատ անդամահատութեան։ Նրանք անջատվեցին մէկը միւսի հետից մինչև ներկայ ժամը, երբ այլ ևս ոչինչ չէ մնում։ Նոյն երևոյթը տեղի է ունենալու Ասիայում, եթէ միայն իրական ձևով չը կարողանան երաշխաւորել ընակիչների կեանքի և գոյքի ապահովութիւնը։ Որոշ նշաններ ցոյց են տալիս, որ հայերը լրջօրէն կոչ են արել ռուսական միջամտութեան։ Սակայն նրանք չեն ցանկանում անհնարին։ Նրանք փափագում են պահպանել իրանց ազգութիւնը և իրանց եկեղեցու անհատականութիւնը։ Նրանք գիտեն, որ ռուսական տիրապետութեան ներքոյ չեն կարող յուսալ թէ առաջնի և թէ երկրորդի պահպանութիւնը։ Ուրեմն նրանք կը ցանկային շարունակել կազմել օսմանեան կայսրութեան մասն, հասկանալով որ այդպիսով կարող են պահպանել թէ մինը և թէ միւսը։ Բայց եթէ նրանք անհնարաւորութեան մէջ գտնվեն ստանալ իրանց կեանքի և գոյքի ապահովութիւնը, մղված յուսահատութիւնից՝ կը հայցեն ազատագրութիւն Ռուսաստանից։

Ռուսաստանը Սան-Ստեֆանոյի դաշնագրից ի վեր անդադար ցոյց է տուել, որ տրամադիր է լսել նրանց կոչը, և այդպիսով մենք կարող ենք մի օր գտնվել օսմանեան կայսրութիւնից անջատված մի Հայաստանի ներկայութեան առաջ։

Կայ մի երկրորդ պատճառ, որպէսզի հայկական հարցը յարուցվի. այդ այն է, որ պատերազմի հետևանքների ամեն մի կանոնաւորումն ստիպիլու է Թիւրքիային խնդրել ֆինանսական աջակցութիւն, և անհնարին կը լինի շնորհել այդ աջակցութիւնը առանց երաշխիքի։ Ինչպէս այդ ֆինանսական երաշխիքը կարող է տացվել առանց վարչական մի այնպիսի ձևի, որ երաշխաւորէր կեանքը և գոյքը, և ինչ շանսեր կունենայինք՝ հասնելու արդիւնաբերական կամ ֆինանսական բարգաւաճման, եթէ բէֆորմները չիրագործվին։ Կայ և մի երրորդ պատճառ, որ հնարաւոր է կացուցանում հայկական հարցի կանոնաւորումը՝ ներկայ ժամին միայուն ձևով և հատատ հիմքի վրա. դա Գերմանիայի բռնած դիրքն է։

Բերլինի դաշնագրի ստորագրութիւնից յետոյ, այս վերջին 25 տարվայ ընթացքում, Գերմանիայի շահերը այս խնդրի մէջ ամբողջովին փոխվել են։ Ինչպէս իշխան Բիսմարկը այն ժամանակ ասաց, Հայաստանի խնդիրը առանց շահի էր Գերմանիայի համար։ Այժմ, ընդհակառակը, նա ամենաշահեկանն է դարձել նրա համար, որովհետև վերջին 20 տարվայ ընթացքում Գերմանիան յղացաւ և իրագործեց երկաթուղու մի մեծ ծրագիր Մարմարա ծովի և Պարսից ծոցի միջև։ Գերմանիայի շահերը, ինչ վերաբերում է երկաթուղուն, պահանջում են, որ կեանքի և գոյքի ապահովութիւն տիրէ երկաթուղու անցած նահանգներում. այլապէս ոչ մի շանս չէ կարող լինել գտնել այդտեղ տեղական կամ ընդհանուր առևտրի տարրեր։ Ուրեմն ամեն հիմք կայ կարծելու, որ գերմանական կառավարութիւնը նոյնչափ ցանկացող է, մեծ պետութիւններից ամեն մէկի նման, որ հայկական հարցը կանոնաւորվի։

Մեզ համար այդ կանոնաւորութիւնը մեծ կարևորութիւն ունի։ Մենք ստանձնել ենք մի ծանր պատասխանատուութիւն աշխարհի առաջ։ Կիպրոսի դաշնագրի համաձայն, մենք պարտաւորվել ենք պաշտպանել օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը Ասիայում։ Եթէ այդ պարտականութիւնը պէտք է կատարենք, մենք իրաւունք ունենք պահանջել բէֆորմների իրագործում։ Ենթադրեցէք, որ հայերը պաշտպանութիւն խնդրեն. մենք կընդդիմանանք Ռուսաստանի ներկայացրած պահանջին՝ բէֆորմները կատարել տալու։ Եւ մի ուրիշ կողմից, արդեօք պէտք է երաշխաւորենք Ասիական Թիւրքիայի ամբողջութիւնը բէֆորմների բացակայութեամբ։

Հետևաբար, մեզ համար ամենից շատ կարևոր է, քան մի այլ ազգի համար, որ անմիջապէս միջոցներ ձեռք առնվեն բէֆորմների իրագործման համար։ Երբեմն յայտնել են, որ իրանց հայերի կողմից միութիւն չը կայ այդ բէֆորմների հարցի մասին։ Սան-Ստեֆանոյի դաշնագրի ստորագրման ժամանակ՝ կար բէֆորմների միծրագիր. այդ դաշնագրի 16-րդ յօդուածը փոփոխութեան ենթարկվեց Բերլինի դաշնագրով. սակայն ոչ մի բան չարվեց։ 1895-ին, Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանները մշակեցին բէֆորմների մի ծրագիր, որ ընդունվեց Բ. Դրան կողմից, բայց երբէք չը կատարվեց։ Այս վերջին տարիները՝ կարծիքների տարբերութիւն եղաւ հայերի մէջ անելիքի մասին։ Ոմանք, յուսահատված, ցանկանում են ռուսական միջամտութիւն, բայց, բարեբաղդաբար, այս վերջին ամիսների ընթացքում, հայոց եկեղեցու հոգևոր պետի հովանու ներքոյ, Կ. Պօլսի պատրիարքի աջակցութեամբ, որ այդ եկեղեցու երկրորդ հեղինակութիւնն է, և հայկական բոլոր յեղափոխական և չափաւոր կուսակցութիւնների աջակցութեամբ, մի կատարեալ համաձայնութիւն է առաջ եկել բէֆորմների ծրագրի մասին։

Բէֆորմների այդ ծրագիրը շատ չափաւոր է. դա աւտոնոմիայի ծրագիր չէ։ Էապէս նա պահանջում է միայն 1895-ի ծրագրի արամադրութիւնների իրագործումը։ Ես կը բաւականանամ շեշտելով միայն գլխաւոր կէտերը։ Առաջին տեղը բռնում է հայկական վեց նահանգների համար նշանակումը մի բարձր կոմիսարի, կարգված Բ. Դրան կողմից, մեծ պետութիւնների հաւանութեամբ։ (Կարծում եմ, որ սրա տարբերութիւնը 1895 թ-ի ծրագրից այն է, որ պահանջվում է, թէ բարձր կոմիսարը լինի մի եւրոպացի)։ Երկրորդ կէտը՝ կոնտրոլի և վերահսկողութեան մի մնայուն յանձնաժողովի հաստատութիւնն է, յանձնաժողովի, որի ընակութեան վայրը պէտք լինի այդ նահանգներում և որի նախագահը պէտք լինի բարձր կոմիսարը. այդ յանձնաժողովը բաղկացած պէտք է լինի երեք միւսիւլման և երեք քրիստոնեայ անդամներից և մեծ պետութիւնների կողմից պատուիրակվել երեք քաղաքացիական գործակալներից։ Իբրև վարչական բէֆորմներ՝ ծրագիրը*) առաջարկում է յետոյ մի ընտրական ժողով, բաղկացած քրիստոնեաներից և միւսիւլմաններից՝ հաւասար թվով, հատատութիւնը մի ժանդարմերիայի և մի ոստիկանութեան, դատարանների բէֆորմ և հողային հատուցումների կանոնաւորումն, ինչպէս և ուրիշ նուազ կարևոր գանգատներ, որ հարկ չեմ տեսնում այստեղ մանրամասնօրէն բացատրել։ Սա հատարակ կարելի է ասել, որ այս ծրագիրը պարունակում է միևնոյն տրամադրութիւնները, ինչպէս երեք մեծ դեսպանների յիշատակագիրը 1895 թ-ին՝ մի քանի անհրաժեշտ փոփոխութիւններով այժմեան հանգամանքներին համապատասխան։

Ես կամենում եմ, որ արտաքին գործերի մինիստրը, միւս մեծ պետութիւնների ներկայացուցիչների հետ միասին, բարեհաճի նպաստաւոր կերպով նկատողութեան առնել հայկական պատգամաւորութեան այս պահանջները, պահանջներ՝ որոնք ըստ ինքեան ծայրայեղ չափաւոր են և որ գանգատ երկիրների հայկական կոմիտէները ճանաչում են իբրև անհրաժեշտ մինիմում՝ երաշխաւորելու համար կեանքի և գոյքի ապահովութիւնը Հայաստանում։ Մնդրէն Բօտ ծանօթ անձանց կարծիքն այն է, թէ մի անգամ, երբ կը մացվեն բէֆորմները հայկական նահանգների և Կիլիկիայի մէջ, ուր նոյնպէս հայերի մեծ թիւ կայ, նրանցից ծագած օգուտները կը տարածվեն Ասիական Թիւրքիայի բոլոր նահանգների վրա և կարացնեն օսմանեան ասիական կայսրութեան գոյութիւնը։

*) Ծանօթ. խմբ.—Բրայսի ակնարկած այս ծրագիրը այն է, որ Պարիզում մշակել է Պօղոս Նուպարփաշայի նախագահութեամբ կազմված մի մասնաժողով, մասնակցութեամբ Վիկտոր Բէքարի, Մինաս Չերազի, Համբ. Ասատիկանի, Երուանդ-բէյ Ազաթոնի, Արշակ Չօպանեանի և այլոց։

ԱԶԳ. ԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԴԻՒԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

—

Կ. Պօլսից մեզ հաղորդում են, որ այնտեղ ամսոյ 3-ին բացվել է հայոց ազգ. ժողովի նոր նստաշրջանը՝ 74 երեսփոխանների մասնակցութեամբ։

Արշարունի պատրիարքը բաց անելով ազգ. ժողովի նիստը՝ կարդացել է նախագահական մի ճառ, որի ուշադրաւ կէտերը առաջ ենք բերելու «Մշակի» վաղվայ համարում։

Նախագահական ճառի ընթերցումից յետոյ՝ ժողովը անցել է ընթացիկ գործերի։

Ապա ձեռնարկվել է ազգ. ժողովի դիւանի ընտրութեանը։ Ընտրվել են՝ Ա. տաճատապետ Գաբրիել Նորատունկեան (43 ձայնով ընդդէմ 26-ի), Բ. տաճատապետ՝ Հրանտ Ասատուր, Գ. տաճատապետ՝ գօտ. Ն. Տաղտաբեան. Ա. տաճատպետիր Հմ. Արամեանց, Բ. տաճատպետիր՝ Երուանդ Պէյազեան և Գ. տաճատպետիր՝ Աղէքսանդր Փանոսեան։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ

—o—

Կ. ՊՕԼՍԻ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՑԻՇԱՏԱԿԱԳՐԻ ՄԱՄԻՆ

(Կ. Պօլսի գերման. դեսպանատանից հրատարակված «Osmanischer Lloyd»-ի առաջնորդող)

—

Չկայ բան մը, որ աւելի զրաղեցնէ այս պահուս բոլոր անտանը, որ կուզին Ասիական Թիւրքիոյ հողային ամբողջութեան պահպանումը, կարելի է ըսել Դաղի Օսմանի կայսրութեան գոյութիւնը, քան հայկական խնդիրը։

Ժողովուրդէն տարբ մը, որ ամենաւելի գնահատուած է իր քաղաքացիական ձիրքերուն և արդի պետութեան մը մասին իր ըմբռնումին համար, այնպիսի գոյութեան մը ենթարկուած է, որ յեռամեայ ժողովուրդ մը իսկ չպիտի ընդունէր առանց տրտունջի։

Այլ ևս չենք ապրիր այն օրերուն մէջ, ուր մարդ իր ձայնը ի նպաստ հայերուն բարձրացնելուն համար հանրութեան թշնամիի տեղ կը դրուէր։

Եպարքոս Մամուլ-Շէվքէթ-փաշա ինքն իսկ ամենապայծառն վկայագիրը տուաւ հայ զինուորներուն հայրենասիրութեանը և հաւատարմութեանը։

Ոչ ոք կը տարակուսի, թէ այս ազգը եթէ գտնէ օսմ. հողին վրայ ապրուելիք կեանքի մը ապահովութիւն, ամենէն հաւատարիմ պաշտպաններէն մին պիտի ըլլայ օսմ. պետութեան։ Ասիկա օժանդակութեան այնպիսի տարր մըն է, զոր պէտք չէ շատ վար գնահատել։

Օսմ. կայսրութիւնն իր սահմաններուն մէջ ունի այնքան ժողովուրդներ, որ աւելի կամ նուազ բացայայտ կերպով իրենց փրկութիւնը կը փնտռեն սահմանագրութիւնէն անդին, որ պէտք է զգուշանայ իրմէ պաղեցնելու գոհ հպատակներ ըլլալու և ամեն զոհողութիւններ ընելու պատրաստակամ տարրերը։

Անցեալ կիրակի հայոց ընդհ. ժողովը եւ պարքոսին յանձնել տուաւ յիշատակագիր մը, որ կը բովանդակէ իրենց ազգին բոլոր գանգատները։

Անկէ կը հետևի, թէ Արևելեան Անատոլուի նահանգներուն մէջ տեղի կունենան բաներ, որ պէտք է անկարելի ըլլային սահմանադրական ոեէ պետութեան մէջ, և չափազանցութիւն չը ըլլար, երբ ըսուի, որ այս բաները տեղի կրնան ունենալ միայն բացարձակ անիշխանութեան վիճակի մէջ։

Իրաց այս վիճակը դարմանելը դիւրին բան չպիտի ըլլայ, ու ամեն պարագայի մէջ, չպիտի կրնայ ըլլալ մէկ օրէն միւսը։

Այն նահանգներուն մէջ ընկերային յարաբերութիւններն այնքան կնճռալից են, վարչութիւնը՝ երկարատև ու յանցապարտ զանցառութեան մը հետևանօք՝ այնքան մթրճուած է անել ճահիճի մը մէջ, որ մէկ քանի մեծ տէրութեան հողին բերանը պիտի գար։

Նոյն իսկ ռուս կառավարութիւնը, որ սակայն չի վախնար դժուարին լուծումներէն, անդամ մը Կովկասի մէջ դատապարտուեցաւ անկարող հանդիսանալի դեր կատարելու հայերուն և թուրքերուն միջև մղուած արիւնալից պայքարին առնչ։

Այս կռիւը տեղի չէր ունենար անմատոյց լեռներու մէջ, այլ ի Բագու, Կովկասի նահանգին այն բարգաւաճ կեդրոնին մէջ։

Այս փորձառութիւնէն խրատուած, ռուս կառավարութիւնը անգործ չմնաց, և եթէ չյաջողեցաւ վերցնել բոլոր պայթուցիկները, սակայն կրցաւ հեռացնել հրդեհը։

Հայաստանի մէջ ալ դարմանը դիւրին չպիտի ըլլայ գտնել, և ոչ մէկ դարման կը խոստանայ արագ բժշկութիւն։

Բայց գտնէ կարելի ըլլայ առաջքն առնել ամենամեծ վտանգներուն, և գտնել մէկ քանի միջոցներ, որ պիտի կրնան աւելի տաղնի դարձնել ոչ միայն հայերուն վրայ, այլ նաև ինդրոյ առարկայ նահանգներու մէջ խմբուած բոլոր տարրերուն վրայ ծանրացող պայմանները։

Եպարքոսն ընդունեց՝ թէ անհրաժեշտ է ազգու գործողութիւն մը։ Անիկա չի սիրեր պարապ խօսքերը և այնպիսի մէկը չէ, որ դժուար կատարուելիք խոստումներ ընէ։ Բացէ ի բաց կը յայտարարէ, թէ չուզեր կրկնել այս խոստումները, այլ իրողութիւններով կուզէ ցոյց տալ, թէ ինչ է կառավարութեան դիտումը։

Այս խօսքերը պէտք է իրենց ազդեցութիւնը գործեն, որովհետև այս նահանգներուն դժբաղդութեան մէկ պատճառն էին գեղեցիկ խօսքերու առատութիւնը և գործնականին ոչնչութիւնը։

Ուրեմն կարելի է վստահ ըլլալ, որ պիտի գործուի և Թիւրքիոյ օգնելով հաշտութիւն կնքել, մեծ պետութիւնք անոր պիտի ընծայեն հարկ եղած միջոցները, վերջ տալու Արևելեան Անատոլուի մէջ տիրող անիշխանութեան։ Կայսրութեան այս մասը հիմա զուրկ է վերուրէ։ Մանաւանդ այնտեղ չեն գտնուիր լուսատիա ու քաջարի օֆիցէրներ, որ ամեն պարագայի մէջ ներշնչուին իրենց պարտականութենէն։ Առ այժմ այն երկիրը առարկայ է ուենէն սանձարձակ աւազակութեան։

Եթէ ռուսական Կովկաս լոկ մէկ քանի շաբաթ զրկուած ըլլար զինուրէ, ինչպէս հայկական նահանգները, այնտեղ ալ պիտի տեսնուէին նմանօրինակ դէպքեր, եթէ ոչ յոռեգոյն։

Հաշտութիւնը կնքուելուն պէս, օսմ. կառավարութիւնը իր բովանդակ կորովը է գործ պիտի դնէ աւազակութիւնը ջնջելու համար։

Բայց աւազակութիւնը չէ չարիքին արմատը, այլ պտուղներէն մէկը։

Ճշմարիտ բժշկութիւնը այն տեսն միայն յուսալի է, երբ ճարտար ու ապահով ձեռք մը տայ նշդրակի հարուածը, առանց երկար բարակ ճառերու ու օդային խոստումներու։

Եպարքոսը ճիշդն ըսաւ, և ոչ ոք իրաւունք ունի կասկածելու իր խօսքերէն։

Քաղաքակիրթ աշխարհը, որ Թիւրքիոյ գոյութիւնը անհրաժեշտ կը դատէ ի նպաստ աշխարհի խաղաղութեան, իր հակակրութիւնը չպիտի մերժէ Թիւրքիոյ, երբ անիկա վճռէ ապահովել իր արևելեան սահմանագրական երկրի մէջ անհրաժեշտ սկզբունքները։

(«Բիւզանդիոն»)

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐԱՀԱՐՈՒԹԻՒՆԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

11 և 12 մայիսի

Աթէնք.—Ճիշդ չեն այն լուրերը, թէ իբր հրաման է տրված յարձակում գործել Կավալայի և բոլգարներից գրաւված այլ կէտերի վրա։ Յունաց կառավարութիւնը հաւատացած է, որ վերջին միջադէպերը, չը նայած իրանց լրջութեան, ուրիշ հետևանքներ չեն ունենայ։

Պանդայօնից ստացված հեռագիրը յայտնում է, որ այնտեղ վերջին օրերս ընդհարումներ տեղի ունեցան յոյների և բոլգարների միջև յոյն զօրքերից գրաւված շրջաններում։ Մանրամասնութիւնները յայտնի չեն։ Սոֆիայի յունաց դեսպանը Դիշօվին բողոք է յայտնել բոլգարների Պանդայօնում թոյլ տուած գործողութիւնների դէմ։ Դիշօվը հաւատացրել է դեսպանին, որ անմիջապէս կարգադրութիւն կը լինի թշնամական գործողութիւնները դադարեցնելու մասին։

Արտաքին գործերի մինիստրութիւնը հաղորդում է, որ յոյն և բոլգար զօրքերի ընդհարումը լուրջ բնաւորութիւն չունէր. սահմանային աննշան հրացանաձգութեան մէջ թեթև վիրաւորված են երկու յոյն զինուոր։

—

Սալոնիկ.—Մայիսի 10-ին յոյն-բոլգարական ընդհարումները չը վերսկսվեցին։ Մայիսի 9-ին թուով աւելի շատ բոլգարները յետ քշեցին յոյներին դէպի հարաւ։ Պրաֆիստում յոյն իշխանութիւնները կալանաւորել են Զօդէնի, Ֆլօրինի և Կաստորիայի աւելի քան նախկին 200 հայդուկների։ Այդ տեղեկութիւնը յուզմունք առաջ բերեց բոլգարական քաղաքական շրջաններում։

—

Սոֆիա.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են. մայիսի 9-ի առաւօտեան յոյն զօրքերը Բաղչէղի մօտերը բային կրակ թնդանօթներից, հրացաններից ու գնդակոցիներից բոլգար զօրքերի դէմ։ Սկզբում բոլգարները չէին պատասխանում, բայց երբ յոյները փչացրին երկաթուղային գիծն ու հեռագիրը, այն ժամանակ բոլգարները իրանց հերթին կատաղի կրակ սկսեցին և հարկադրեցին յոյներին նահանջել դէպի Օրֆանօ ծոցը։

—

Բելգրադ.—Սերբական «Պրէս-Բիւրօ» հերքում է գերմանական և աւստրիական լրագիրների այն տեղեկութիւնները, թէ իբր սերբ զօրքերը հրդեհել են Զագարին և սպանութիւն են կատարել մի հիւանդանոցում և իբր ընդհարման ժամանակ սպանվել են 6 բոլգար ու վիրաւորվել են 80 հոգի։

—

Բուխարէստ.— Պահպանողականների ժողովում սենատի նախագահ Բօզէտիի և մինիստրների ներկայութեամբ կարդը առաջարկեց բանաձևով մերժելուն-բոլգարական վէճի Պետերբուրգի վեհաժողովի վճիռը։ Բօզէտին ասաց, որ հարցը կարող է լուծել միայն պարլամենտը։ Անձամբ Բօզէտին կողմնակից է Սիլիստրիան ընդունելուն։ Մինիստրներն առաջարկեցին քուէարկութիւնը յետաձգել, որը և ընդունվեց։

Ազատամիտների կուսակցութիւնը առաջարկում է այդ առիթով հետևեալ բանաձևը. Պետերբուրգի վեհաժողովի արձանագրութիւնը վաւերացնել պարլամենտում, որպիսի վաւերացումը սակայն չի նշանակի, թէ կառավարութեանը յայտնվում է վստահութիւն։ Եթէ բոլգարները չը համաձայնեն վեհաժողովի վճռին, ազատամիտների կուսակցութիւնը խորհուրդ է տալիս դրաւել Սիլիստրիան այժմ։

—

Պարիզ.—«Տանը» տեղեկացնում է, որ Ֆրանսիան բացատրել է դաշնակիցներին՝ թէ նրանք պէտք է համաձայնութիւն կապեն իրար միջև, եթէ յոյս են դնում ֆրանսիական աջակցութեան վրա։

—

Կ. Պօլիս.—Կառավարութիւնը շարունակում է ձեռք առնել խստագոյն միջոցներ մայրաքաղաքում կարգ ու կանոնը պահպանելու համար։ Ոստիկանատներում դրված են զօրամթերք։ Ասում են, որ «Մ. և Ա.» կոմիտէն գաղտնի խարդախութիւններ է կատարում մի քանի մինիստրների մասնակցութեամբ։ Քննվել են չափազանց կարևոր նշանակութիւն ունեցող հարցեր։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

11 և 12 մայիսի

Պարիզ.—Պուանկարէի ցանկութեամբ Կլէմանսոն այցելեց նրան Ելիսեան պալատը և խօսակցութիւն ունեցաւ։

Յիշեալ խօսակցութեան բովանդակութիւնը պաշտօնապէս չէ ծանուցվել։ Լրագիրները ենթադրում են, որ խօսակցութիւն է եղել երկրի ընդհանուր դրութեան մասին։ Ուրիշները պնդում են, որ պրեզիդենտը շնորհակալութիւն է յայտնել Կլէմանսոյին, երեքամեայ զինուորական ծառայութեան հարցում կառավարութեանը աջակցելուն համար։

—

Կ. Պօլիս.—Օսմանեան դրծակալութիւնը հաղորդում է, որ ամերիկեան «Հէրալդ» շրջենաւը, դուրս գալով Զմիւռնիայի նաւահանգստից, դիպել է ականի և ջրասոյզ եղել։ 200 ճանապարհորդից փրկվել են միայն 80 հոգի։

—

Կ. Պօլիս.— «Թէրջիմանը-Հաքիքաթ» լրագիրը հաղորդում է. «Այս օրերս Էնվէր-բէյը իր պօրուչիկի հետ առաջաւոր նաւով զբօսանք կատարեց Բէօյիւք-Զեքմէջէի մօտերը։ Յանկարծ նաւը սկսեց խորտակվել։ Դժբաղդութիւնը նկատվեց «Իշիլիէ» զրահանաւից։ Ուղարկված նաւակը ջրից հանեց Էնվէր-բէյին և պօրուչիկին և բերեց զրահանաւը, որտեղից Էնվէր-բէյը, նրա խնդիրքով, տարվեց գլխաւոր բանակը»։

—

Մոսկվա.—Մեծ հանդէսով, հարիւր հազարաւոր բազմութեան ներկայութեամբ, տեղի ունեցաւ Երմոգէն պատրիարքը սրբերի շարքը դասվելու արարողութիւնը։

—

Տօկիօ.—Երեկ. ժ. 9-ին միկադոյի տաքութիւնը 38,4 էր. դիշերը հանգիստ անցրեց։

—

Տօկիօ.—Կայսրի հիւանդութեան առիթով եռապօնական պալատը համակրական հեռագիրներ ստացաւ անգլիական թագաւորից և Միացեալ-Պետութիւնների պրեզիդենտից։ Կայսրի հիւանդութիւնը նօրմալ է ընթանում։

—

Իգլպէս (նահ. Տէվոս).— Մէկսիկացի ապստամբները, թակարդ լարելով 100 կառավարական զինուորի, զնդակահարեցին բոլորին։

—

Լօնդրիշ (Կալիֆորնիա). —Տեղական տօնի ժամանակ այն տախտակամածը, որի վրա կանգնել էր հասարակութիւնը, քանդվեց։ Լուրերի համաձայն սպանվել են 60 մարդ։

ՕԳՈՍՏԱՓԱՔ ՀԻՒՐԵՐԸ ԲԵՐԼԻՆՈՒՄ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

11 և 12 մայիսի

Բերլին.—Ժ. 10-ին պալատում կայացաւ պաշտօնական ճաշկերոյթ, յետոյ հանդիսաւոր ներկայացում թագաւորական օպերային թատրօնում։ Թատրօնի շէնքը զարդարված էր գերմանական, ռուսական և անգլիական դրօշակներով։ Ներսը զարդարված էր սպիտակ, վարդագոյն ու կարմիր ծաղիկներով։ Թատրօնում ներկայ էին Բերլինի բարձր հասարակութիւնը, դիպլօմատիական մարմինը, կանցլերը, մինիստրները, զեներալները, ծովակալները։ Ժամը 9-ին թագաւորական մեծ օթեակը մտան արքայական ամուսինները, Վիլհէլմ կայսրը անգլիական թագուհու հետ, Թագաւոր Կայսրը վեստֆալեան հուսարական իր ատուան գնդի համազգեստով՝ Կումբերլենդի դքսուհու հետ, գերմանական կայսրուհին անգլիական թագաւորի հետ և միւս օգոստափառ անձինք։ Օթեակի առաջին կարգում բազմեցին մէջտեղում հորապակները, ապից՝ Վիլհէլմ կայսրը, անգլիական թագուհին, Կայսրը, դքսուհին, ձախից՝ գերմանական կայսրուհին, անգլիական թագաւորը և մեծացած բարձրագոյն անձինք։ Ժ. 8 և կէսին սկսվեց «Լոէնգրին» օպերային ներկայացումը։

Դեսպանատանը բարձրագոյն նախաճաշին ներկայ էին նաև Կայսերական շքախումբը, դեսպանատան պաշտօնեաները, զինուորական, ծովային և տեսարական գործակալները, գեն.-հիւպատոսները, բոլորն էլ իրանց կանանցով։ Թագաւոր Կայսրը դեսպանատուն ժամանեց ժ. 12¾-ին ու մտաւ եկեղեցին, ուր Մալցեվ աւ.-քահանան, դիմաւորեց Նորին Մեծութեանը խաչով ու օրհնված ջրով։ Մաղթանքից յետոյ Կայսրը անցաւ դեսպանատան վերին սենեակները, ուր բաղդ ունեցան ներկայանալ Կայսրին հրաւիրված անձինք։ Թագաւոր Կայսրը ողորմածաբար խօսակցեց ամեն մէկի հետ առանձին։ Նախաճաշին Կայսրի աջ կողմում նրս-

տել էր կոմս Պուրտալէսը, ձախից՝ դեսպանատան առաջին քարտուղարի կին Բօտկինան և այլն։ Նախաճաշից յետոյ Կայսրը Նորից ողորմածաբար խօսակցեց հրաւիրվածների հետ և ժ. 3-ին մեկնեց, ճանապարհին ողջունվելով ժողովրդից ցնծագին։

(Ճեպընթաց). Երեկոյեան ժ. 10 ու 35 ր. Թագաւոր Կայսրը մեկնեց Ռուսաստան։ Կայարանում հրաժեշտ տուեց Վիլհելմ կայսրը։

—

Բերլին.—Պակադրութիւնից յետոյ նորապակները ընդունեցին շնորհաւորողներին։ Յետոյ կայացաւ պաշտօնական ճաշ 1100 հոգու ներկայութեամբ, որի ժամանակ Վիլհելմ կայսրը խմեց նորապակների կենացը։ Պրուսական պալատի սովորութեան համաձայն ճաշից յետոյ կայացաւ լապաբային պար, որի ժամանակ նորապակները հերթով պարեցին բոլոր օգուտափառ անձերի հետ։ Ապա նորապակները մեկնեցին Գուբէրտուստոկ ամրոցը։

Թագաւոր Կայսրին Անհալտի կայարանում հրաժեշտ տալու ժամանակ Վիլհելմ կայսրը երեք անգամ համբուրվեց Նորին Մեծութեան հետ։

Կայսրը ընծաներ շնորհեց պեսական կանցլերին, արտաքին գործերի սատա-սեկրէտարին, որա օգնականին, Պետերբուրգի գերմանական դեսպանին։ Վիլհելմ կայսրը Պալատի ժամանակաւոր մինիստր իշխան Կօչուբէյին շնորհեց Կարմիր Արծուի շքանշանը, ընծայ՝ պալատական կօմենդանտ Դէդրուլինին, Պալատի մինիստրութեան դիւանապետ Մօսոլովին գոհարներ Կարմիր Արծուի շքանշանի համար և այլն։

Թագաւոր Կայսրը բարեհաճեց թոյլատրել դեսպանատան եկեղեցում տախտակ խրել ի յիշատակ դեսպան Նատուն այցելելուն։ Այդպիսի տախտակ կայ Ալէքսանդր III կայսրի 1889 թ. հոկտ. 1-ին գործած այցելութեան մասին։

Կայսրը դեսպան Սվերբէեվին շնորհեց իր պատկերը սեփական ստորագրութեամբ։

Կայսերական գնացքի մեկնելուց յետոյ Վիլհելմ կայսրը երկար խօսակցեց դեսպան Սվերբէեվի հետ։

Վիլհելմ կայսրը, անգլիական թագաւորը և մեծացած օգուստափառ անձինք ուտօմօբիլներով զբօսանք կատարեցին Պոտսդամում։

Թագաւոր Կայսրը Կումբերլէնդի պրինցին և գերմանական կայսրի որդի Աւգուստ-Վիլհելմին շնորհեց Անդրէյ Նախկոչի շքանշանը։ Վիլհելմ կայսրը դեսպան Սվերբէեվին շնորհեց Կարմիր Արծուի շքանշանի մեծ խաչը։

Թագաւոր Կայսրը Բերլինի աղքատներին նուիրեց 10,000 մարկ։ Աւագ քաղաքագլուխը դեսպան Սվերբէեվի միջոցով յայտնեց քաղաքի շնորհակալութիւնը և խնդրեց տեղեկացնել Նորին Մեծութեանը Բերլինի ազգաբնակութեան ջերմ ուրախութիւնը Կայսրի գալստեան առիթով։

Կայսրին դեսպան Սվերբէեվը ներկայացրեց մեծ պետութիւնների դեսպաններին։ Իւրաքանչիւրի հետ Կայսրը խօսակցեց։

ԱՆԳԼՕ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԿՕՎԷՅՏԻ ԿՕՆՎԷՆՑԻԱՆ

1) Բուն Կօվէյտի հարցը։ Բ. Դուռը ճանաչում է Անգլիայի հովանաւորութիւնը Կօվէյտի վրա։

2) Բ. Դուռը անգլիացիներին իրաւունք է տալիս Շատ-իլ-Արաբի Պարսից ծոցը թափվելու տեղը—Ֆաո—մաքրել և նաւահանգիստ շինել Բասրայում։

3) Անգլիան իրաւունք է ստանում միայնակ կառուցանել Բասրա-Կօվէյտ երկաթուղային գիծը։

4) Անգլիան պնդում է, որ Բաղդադից մինչև Բասրա կառուցվող երկաթուղային գծի մէջ մասնակցութիւն ունենայ և Ռուսաստանը. և հինգ մասնակիցների մէջն մինը (Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Թիւրքիա և Ռուսաստան) իրաւունք ունենայ մացնելու շինութեան համար անհրաժեշտ դրամագլխի 20%։

5) Նաւագնացութիւնը Տիգրիսի և Եփրատի վրա տրվում է անգլիական Լինչի ընկերութեանը որպէս մենաշնորհ։ Այդ ընկերութեան հետ պէտք է ձուլվի օսմ. կառավարչական շոգենաւային «Օման» ընկերութիւնը. և թէև նաւերը պէտք է նաւարկեն Թիւրքական դրօշակի ներքոյ, բայց գործի կառավարութիւնն ամբողջովին պիտի գտնի Լինչի ընկերութեան ձեռքում, որ վճարում է Թիւրքաց կառավարութեանն այդ ձեռնարկութեան զուտ արդիւնքի 25%-ը։

6) Թիւրքիան պարտաւորվում է Մէջագետքի ոռոգման բոլոր աշխատանքները յանձնել անգլիական այն ընկերութեան, որ կառուցել է եգիպտական հռչակաւոր ամբարտանները։

7) Թիւրքիան ծովային իր բոլոր պատուէրները պարտաւոր է տալ բացառապէս Անգլիային, որը, հաստատութիւնը կնքվելուց յետոյ, պէտք է տայ Թիւրքիային նորագոյն տիպի 6 զրահապատ կրէյսէրներ։

8) Մնացած ոչ ծովային պատերազմական պատուէրները, ինչպէս, օրինակ, զէնք, ռազմամթերք, զրահներ և այլն, պէտք է տրվեն Ֆրանսիային։

9) Թիւրքիան պարտաւորվում է հանել իր զօրքերը պարսկական հողից։

Բոլոր այդ արտակարգ արտօնութիւնների փոխարէն Անգլիան իր կողմից յանձն է առնում հետևեալ պարտաւորութիւնները.

1) Ամեն ջանք գործ դնել հայերին խաղաղեցնելու և թոյլ չը տալու ոչ մի օտար միջամտութիւն՝ հայկական շարժման նպատակով։

2) Հաշտութիւնը կնքելուց անմիջապէս յետոյ գլուխ բերել Թիւրքիայի համար 3 միլիոն ֆունտ ստերլինգ նախնական փոխառութիւն հայ-քիւրդական հարցի կանոնաւորման համար և բացի դրանից՝ գլուխ բերել նաև մի աւելի խոշոր փոխառութիւն (ենթադրվում է 30 միլիոն ֆունտ ստերլինգ)՝ վերանորոգելու համար ամբողջ պետական կազմը և օսմ. կայսրութեան զինուորական ոյժերը։ Եւ, վերջապէս, որ ամենագլխաւորն է,

3) Երաշխաւորել Թիւրքիայի ասիական երկիրների անձեռնմխելիութիւնը 1878 թ. կնքված Կիպրոսի կոնվէնցիայի հիման վրա։

Սրանից պարզ երևում է, որ խսկապէս Անգլիան ոչ միայն անտեսապէս տարկացնում է Թիւրքիան, այլև դիմակաւորեալ կերպով խնամակալութիւն է հաստատում ամբողջ օսմ. կայսրութեան վրա, ձգտելով դարձեալ նրանից մի երկրորդ Եգիպտոս։

—

«Times» լրագրում տպված է մի յօդուած, «Vikel» տօրագրութեամբ։ Ամբաստանվում է այդ յօդուածին նուիրել է մի առաջնորդող, որի մէջ արծարծվում է այն մտքը, թէ Թիւրքիան փրկելու համար անհրաժեշտ է Ասիական Թիւրքիայի վրա խնամակալութիւն հաստատել։

—

Լօնդոն.—Այստեղ յայտնի դարձաւ, որ կ. Պօլսի գերմանական դեսպանը յայտնել է Բ. Դրան, թէ Գերմանիան ճանաչում է անգլօ-Թիւրքական պայմանագիրը Կօվէյտին և Պարսից-ծոցին վերաբերեալ, սակայն իրրև վարձահատուցումն պահանջում է դարձեալ կօնցեսիաներ երկաթուղիներ կառուցանելու համար Անգօրայում, Դիարբէքիրում, Սըվազում և Խարբերդում։

ԱՆԳԼԻԱՆ ՊԱՐՍԻՑ ԾՈՑՈՒՄ

Թէհրանի անգլիական դեսպանը պարսից կառավարութեանը մի նոտա յանձնեց, վերաբերեալ Անգլիայի իրաւունքներին, որոնց համաձայն Անգլիան փարոսներ է կառուցանելու Պարսից-ծոցի ափերին և հովանաւորելու է Պարսկաստանին պատկանող Բահրէյն կղզու վրա։

Պարսից կառավարութիւնը պաշտօնական բանակցութիւններ սկսած է Անգլիայի յիշեալ իրաւունքների մասին դեռ այն ժամանակից, երբ խօսք եղաւ 100,000 ֆունտ ստերլինգ աւանս ստանալու մասին։

Անգլիայի այդ նոր ընթացքը բնական լրացումն է անգլօ-թիւրքական համաձայնութեան՝ վերաբերեալ Կօվէյտին։

Պարսից կառավարութեան պաշտօնական համաձայնութիւնից յետոյ, որը ի հարկէ շուտով կը լինի, Անգլիան լիակատար տէր կը հանդիսանայ Պարսից-ծոցի վրա ամբողջ ծովափով ու կղզիներով հանդերձ։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՓՈՔՐ-ԱՍԻԱՑՈՒՄ ԵՒ ՍԻՐԻԱՑՈՒՄ

Կ. Պօլսից հեռագրում են.

«Բ. Դուռը Հակը-փաշային պատուիրագրել է Անգլիայի հետ պայմանագիր ստորագրելուց յետոյ մեկնել Պարիզ և ձեռնարկել քննելու այն հարցերը, որոնք ներկայումս վէճի առարկայ են Ֆրանսիայի և Թիւրքիայի միջև։

«Քննութեան կարգինալ թեղմները հետևեալներն են.

«1) Ֆրանսիան պահանջում է, որպէսզի Թիւրքիան վերջնականապէս հրաժարվի Թունիսի և Ալժիրի վերաբերութեամբ ունեցած իր իրաւունքներից և ճանաչէ այդ երկու շրջանների տեղացիներին ֆրանսիական հպատակ։

«2) Ֆրանսիային պէտք է կօնցեսիաներ տրվեն երկաթուղիներ կառուցանելու համար ամբողջ Սիրիայի սահմաններում։

«3) Թիւրքիան պէտք է զէնք ֆրանսիացիներին որևէ նաւահանգիստ, հաւանօրէն Կայֆոն, միջերկրական նաւատորմի համար։

«4) Ֆրանսիան պէտք է կօնցեսիաներ ստանայ կառուցանելու նաւահանգիստներ ու ծովափներ Սիրիայում և Փոքր-Ասիայում։

«Այդ վէճերի փոխարէն Ֆրանսիան խոստանում է պաշտպանել Թիւրքիային եւրօպայի հետ ունեցածք բոլոր վէճերում, խոստանում է նաև ֆինանսական աջակցութիւն և Պարիզի վեհաժողովում բոլոր միջոցներով աջակցել Թիւրքիայի պահանջներին, ի չէք դարձնելով դաշնակիցների դրամական պահանջը։

«Վերջում պարզվեց, որ, բացի յիշեալից, Բ. Դուռը պահանջում է լրացուցիչ պայմաններ, օրինակ՝ աւելացնել մաքսային տարիքը և իրաւունք տալ իրան արգելք դնել հարկ չը վճարող ֆրանսիահպատակների անշարժ կայքերի վրա։ Ուրիշ խօսքով ասած, Բ. Դուռը պահանջում է վերացնել կապիտուլացիաները։

«Բ. Դուռը պնդում է նաև, որպէսզի Թիւրքական բոլոր վերոյիշեալ պահանջները Ֆրանսիան պաշտպանէ Լօնդոնի դեսպանաժողովի նիստում»։

—

Բուխարեստ.—Կ. Պօլսից հեռագրում են. «Բէյրութի վալին հեռագրով տեղեկացնում է, որ նրա շրջանում վերջին օրերը երևացել են աւելի քան 150 ֆրանսիացի էմիսարներ, որոնք պրօպագանդա են անում ազգաբնակութեան մէջ»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Ինչպէս տեղեկացնում են Բաթումից, մայիսի 3—10 Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցօվ-Դաշկովի առողջական դրութեան մէջ նկատվեց զգալի բարելաւումն։ Մարմնի տաքութիւնը հանգարտ նօրմալ է, զարկերակը 50—58։ Միայն շնչառութիւնը փոքր ինչ անկանոն է։ Ախորժակն ու քունը բաւարար են։

✦ Թիֆլիսի քաղաքային վարչութեան զինուորական-տնտեսական ստանը ձեռնարկել է կազմելու այն երիտասարդների անունները, որոնք այս տարվայ հոկտեմբերից կանչվելու են զինուորական ծառայութեան։ Ընդամենը կանչվելու են 840 երիտասարդ դասնաղան ազգութիւններից՝ բացի հրէաներից։ Նրանք, որոնք առանձին արտօնութիւններ են վայելում ընտանեկան և կրթական ցէնզով, պէտք է այժմեանից յայտարարութիւն ներկայացնեն յիշեալ ատեանին։

✦ Տիգրան Աֆրիկեանը առանձին գրութեամբ դիմել է Կ. Հ. Բ. Ընկ. խորհրդին և յայտնել, որ ինքը յանձն է առնում Սուրբաթի հայոց եկ.-ծխ. զգլոցին իւրաքանչիւր տարի նպաստ տալ 100-ական ռուբլի։ Այսպիսով Տ. Աֆրիկեանի իւրաքանչիւր տարվայ ընդհանուր նուէրը կազմում է 5400 ր., որով Ընկերութիւնը նպաստ է տալիս 20 զգլոցների։

✦ Մեզ հաղորդում են, որ առատական տուն եղը. Օհանէսեանները Սուրբաթի եկ. ծխ. զգլոցի 50-ամեակի առիթով նուէրել են 500 ռուբլի։

✦ Ծառայութեան գործերով Բօրժօմ մեկնեց Թիֆլիսի նահանգապետ Զէրնեավսկին։

✦ Այսօր երեկոյեան Աբտիստ. Ընկ. հանդերգային դահլիճում տեղի կունենայ գօկտօր Ց. Բեռելեանի դասախօսութիւնը ռուսերէն լեզուով, նրա՝ Հնդկաստանում կատարած ճանապարհորդութեան մասին։ Դասախօսութեան ընթացքում ցոյց կը տրվեն մոգական բաղմաթիւ պատկերներ, որ մեծ մասամբ դասախօսը ինքը լուսանկարել է ճանապարհորդութեան ժամանակ։

✦ Այսօր երեկոյեան ժամը 8-ին կայանալու է Կ. Հ. Բարեգ. Ընկ. անդամների ընդհանուր ժողովը։ Ընկերութեան խորհուրդը այդ առթիվ հրատարակել է Ընկերութեան գործունէութեան տեղեկագիրը 1912 թ. համար։ Այդ տեղեկագիրը լիովի գաղափար է տալիս Ընկերութեան գործունէութեան մասին կենտրօնում և գաւառներում։ Լաւ կը լինէր տակաւին, որ տեղեկագրի վերջին՝ իրրև ամփոփումն բերված լինէին մի քանի ընդհանուր տեղեկութիւններ, որ այժմ ընթերցողը կարող է ստանալ միայն ամբողջ տեղեկագիրը կարդալուց յետոյ։ Այսօրվայ ժողովը զբաղվելու է կենտրօնի և ճիւղերի 1912 թ. հաշիւների քննութեամբ և կատարելու է ընտրութիւններ խորհրդի և այլ մարմինների մի քանի անդամների։

✦ Քաղաքային վարչութիւնը որոշել է ամեն տարի 200 ր. նպաստ տալ Կովկասեան Կանանց Ընկերութեանը։

✦ Էլեքտրաքարշի վարչութիւնը, ընդառաջ գնալով քաղաքային վարչութեան առաջարկութեան, կարգադրել է վերացնել այն 3 կօպէկ վճարը, որ առնվում էր Մուշաւիդ այգուց մինչև կայարան Երևանեան հրապարակից կամ այլ գծերից եկողներից։

✦ Թիֆլիսի ատիկանապետը կարգադրել է բոլոր քաղաքամասերի պրիստաւներին և խուզարկու մասի պետին ամենեռանդուն միջոցներով որոնել այն կնոջը, որ մայիսի 11-ին, առաւօտեան, Նեկրասովի փողոցում ենթարկվեց մի կատաղած կատուի յարձակման, որը կծել է յիշեալ կնոջ ձեռքը։

✦ Ս. Դուբօվը իր դասախօսութիւնը ծիծաղի մասին կրկնելու է ժողովրդական Տանը մայիսի 15-ին։

✦ Կիրակի, մայիսի 12-ին, քաղաքային վարչութեան և խուսն բաղմութեան ներկայութեամբ օծվեց այն ընդունարանը, որ Թոքախտի դէմ Մաքառող Ընկերութիւնը բացեց թոքախտաւոր հիւանդների համար։ Ընդունարան-բուժարանը գտնվում է Փեար. 19-ի փողոցում, № 46 տանը, Մուխրանեան կամուրջի դիմաց։

✦ Այսօր Թիֆլիսում տեղի կունենան վերջին ձիարշաւները Դիդուբէում։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ ՆՈՐ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍԸ

Մենք այցելեցինք նկարիչ Գէորգ Բաշինջաղեանի արհեստանոցը և տեսանք նրա նոր նկարները, որոնք շուտով, մի 10 օրից յետոյ, պէտք է հանդէս գրվեն Թիֆլիսի ժողովարանում հասարակութեան համար։

Կան տպաւորիչ և գրաւիչ նոր պատկերներ։

Կան նոյնպէս հին մօտիվների նորատեսակ կրկնութիւններ։

Ընդամենը պատկերահանդէսի համար պատրաստ է 30 պատկեր, որոնց մեծագոյն մասը նոր ստեղծագործութիւններ են։

Նկարիչ Բաշինջաղեանը, որը յայտնի է իբրև դիտող պէյզաժիստ և որը հաւատարիմ մնալով իրական հարազատ էութեան՝ տուել է բնութեան զեղեցիկ արտայայտութիւններ, անցեալ տարվանից ցոյց է տալիս մի նոր հակում՝ դիմել գաղափարական և իդէալական թեմաների, որոնց մէջ բնութիւնը և գաղափարը զուգորդված են միմեանց հետ։

Այդօրինակ նոր ստեղծագործութիւնները չեն հակասում Բաշինջաղեանի հիմնական նկարչական բնաւորութեանը, որովհետև այդ գաղափարակիր պատկերների մէջ դարձեալ բնութիւնը իր իրաւունքի մէջն է և այդ շրջանումն են յայտնագործվում գաղափարական գծերը։

Անցեալ տարի Բաշինջաղեանը տուեց «Ցիսուսը Գեթսեմանի այգում»։ Այս տարի նա տալիս է «Գողգոթան խաչելութիւնից յետոյ»։ Տեսարանը ազդեցութիւն է գործում։ Ձեր առաջ ներկայացված է այն դիշերը, երբ Ցիսուսի խաչելութիւնից յետոյ Գողգոթայի սարահարթում միջավայրն է եղել Փրկչի դատաստանը, իր Մեծ Ուսուցչի մատնիչը։ Խաչելութեան միջոցին որոտացող երկինքը հանդարտվել է. երկրքում լռում են նոսր ամպերը, բայց բաւականաչափ ուժեղ է լսվում լոյսը։ Գիշերվայ այդ լուսաւորութեան մէջ լեռնակողի վրա ցցված են երեք արիւնոտ խաչեր՝ Ցիսուսի և երկու աւազակների։ Չը կան խաչվածների մարմինները. նրանք վայր են բերված և տարված։ Տիրում է լռութիւն և ամայութիւն։ Միայն մի օտարոտի դէմք է կանգնած խաչերի առաջ, մի յուսահատ, ճնշված և մեկուսացած դէմք։ Դա Ցուդան է։ Նա եկել ու կանգնել է դատարկ խաչերի առաջ՝ խորասուզված իր մէջը։ Լուսինը շարունակում է լուսաւորել մարդկային ոգիաութեան և ոճրագործութեան պատմական ըսպանդանոցի տխուր տեսարանը։ Զարհուրելի գիշերվայ խորհրդաւորութիւնը, խաչերի լուռ բողոքը, Ցուդայի քարացած դէմքը ծանրագին ազդեցութիւն են գործում։

Բաշինջաղեանը տալիս է դարձեալ Սեռնայ լճի տեսարաններից մի քանի պատկերներ։ Երանցից մէկը ներկայացնում է ջրային մեծ տարածութիւն լճի խաղաղ բօպէին, երբ նրա հայելու մէջ անդրադարձել են լուսինը և երկնակամարի ամպակոյտերը։ Հեռուում նայում է Սեռնայ կղզին իր անդրադարձումով ծովի մէջ։ Լողում են մի երկու նաւակներ։

Միւս պատկերի մէջ Սեռնայ լիճը նկարված է ցերեկվայ լոյսով, երբ երևում են նրա հիւսիս-արևելեան արեգունի ափերը՝ լուսաւորված արևի հառագայթներից։ Մեծ կեանք կայ ջրի մէջ։ Բազմերանգ է ծովի մակերևոյթը՝ համապատասխան արևի շողերի խաղին, մերձաւոր և հեռաւոր խորշերին, երկնքի և շրջակայքի անդրադարձումներին։

Նոր պատկերներից նոյնպէս աչքի են ընկնում անտառի տեսարանը Բօրժօմի շրջակայքից։ Դա հարաւային անտառի գարնանային մի պատկեր է, որտեղ կան բազմերանգ ծաղիկներով փթթացող ծառեր։ Անտառը ունի խորութեան և տարածութեան պատկերացումների հատաբերքականութիւն։

Գեղեցիկ է մի ուրիշ պատկեր աշնանային տեսարաններից։ Ծառերը արդէն կորցնում են իրանց ամառվայ զգեստը։ Տերևները դեղնել են և գորշացել, բայց երկիրը նորից կանաչել է անձրևներից և աշնանային խոնաւութիւնից։ Կանաչ է մնացել միայն ասեղնատերև եղևնին։

Հետաքրքրական է ձմերային արևմուտի մի նոր նկար։ Երկիրը ձիւնապատ է. ծառերի տերևները բեռնված են ձիւնի բարակով։ Մայր մանող արեգակը խոշոր գունդակի շրջագծով լուսաւորում է շրջակայքը, և նրա շողերը լողում են ձիւնի վրա, տալով իւրատեսակ գունաւորութիւն ձիւնի մակերևոյթին։

Կան և մի քանի ուրիշ ձմերային տեսարաններ։

Ներկայացված են նորից Արարատի պատկերները նոր հայեցակէտով և պարագաներով։

Բաշինջաղեան վերջապէս նկարել է լուսնեակ գիշերների մի քանի նոր պատկերներ։ Նրանցից մէկը պատկերացնում է լուսնի ծագումը Ախուրեան գետի վրա։ Լուսինը իր կարմրաշէկ բոլորագիծ գունդով ուժեղ լուսաւորում է գետի ջրերը, գունաւորելով և մթնոլորտը։ Հինաւուրց տաճարը և պատմական տները տալիս են խորհրդաւորութիւն պատկերին։

Բաշինջաղեանի նոր պատկերահանդէսը անկասկած մեծ հաճոյք կը պատճառի գեղարուեստասէր հասարակութեան։

Ա. Բալանեան

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Դիմելով հայկական ուսուցիչներին խնդրում եմ բացատրել ինչ տարբերութիւն կայ՝ երեխայ, զաւակ և որդի բառերի մէջ։ Սրանցից ո՞րն է արական, ո՞րը իգական և ո՞րը անորոշ։ Օրինակ՝

Ես ունեմ զաւակներ։ Աղջիկ են թէ տղայ։

Դու ունես որդիներ։ Աղջիկ են թէ տղայ։

Նա ունի երեխաներ։ Աղջիկ են թէ տղայ։

Զաւակ, որդի, երեխայ. այս երեքից ո՞րը անպատճառ արական սեռ է ցոյց տալիս։ Մի փոքրիկ վէճը դադարեցնելու համար, «Մշակից» խնդրում եմ մի փոքրիկ անկիւն, հայկաբաններից մի բացատրութիւն։ Պատասխան ստանալուց յետոյ կը խոստովանեմ իմ տգիտութիւնը։

Բացատրութեան սպասող՝

Սարիբէգ Տէր-Մելքիսեդեկեան

—

Պատասխան

Վերոյբերեալ հարցը «Մշակի» խմբագրութիւնից ինձ առաջարկվեց պատասխանելու։ Համաձայնի դնում եմ պատասխանը։

Հարցի առարկայ եղած բառերի այժմեան անորոշ նշանակութիւնը ճշդելու լավագոյն միջոցն է իմանալ, թէ այդ բառերն սկզբնապէս ինչ են եղել նշանակելիս, և ապա հետամուտ լինել, թէ նրանց սկզբնական նշանակութիւնը ինչպէս է փոխվել հետզհետէ։

Նրեխայ կամ երեխայ բառը սկզբնապէս նշանակում էր «չը մկրտված», ինչ հասակի էլ որ լինէր։ Ի միջի այլոց՝ յիշեմ Եղիշէից մի կտոր, որտեղ ասված է, թէ Վարդանանց պատերազմի նախընթաց գիշերը քահանաները բանակում ամլան կանգնեցրին, «և եթէ գոյր ոք երեխայ ի բազմութեան զօրուն՝ մկրտեցին»։ Ուստի երբ մի ժամանակ հայը ասում էր մեկի մասին, թէ «նա դեռ երեխայ է»՝ հասկացվում էր, թէ նա դեռ մկրտված չէ։ Ժամանակի ընթացքում մեր մէջ սովորութիւն դարձավ մկրտել մանուկ հասակում (առաջ մկրտում էին չափահասութեան ժամանակ). ուստի այս ժամանակ երբ ասում էին «նա դեռ երեխայ է»՝ հասկանում էին «նա դեռ մկրտված չէ» և միևնոյն ժամանակ՝ «նա դեռ փոքրահասակ է»։ Երեխայ բառի այս վերջին նշանակութիւնը (փոքրահասակ) ընդհանրացաւ և խոփանեց առաջին նշանակութիւնը։

Արդ՝ քանի որ երեխայ բառը սկզբում երբէք սեռի խտրութեան համար չէ գործածվել, այլ միայն մկրտված չը լինելու՝ պրանից հետևում է, որ ներկայումս երեխայ բառը կարող է նշանակել անխտիր՝ «փոքրահասակ», թէ տղայ և թէ աղջիկ։

Զաւակ բառը սկզբնապէս նշանակում էր այսինչի սերունդ, այսինչից սերված, ոչ թէ անշուշտ որդի, այլ նաև թոռ, ծոռ, թոռան թոռ և ավելի հեռաւոր յետնորդ, դարձեալ առանց սեռի խտրութեան։ Բիբլիական իր տեսած հրէաներից մէկին կոչում է «զաւակ Աբրահամու»։ Այս սկզբնական նշանակութիւնը հետզհետէ սղվելով՝ սահմանափակվել է ներկայումս՝ միայն առաջին սերունդի (որդիների) վրա, բայց դարձեալ առանց սեռի խտրութեան։ Ուրեմն զաւակ կոչվում է ներկայումս թէ տղան և թէ աղջիկը։ Ժողովրդական զուտակատուն (=արգանդ) բառը ապացոյց է բառի այս նշանակութեան։

Որդի բառը գրաբարում խառն նշանակութիւն ունի. գործ է ածվում և՛ զաւակ բառի հետ խմատով (=սերունդ, յետնորդ), և՛ իբրև հօր ու մօր անմիջական սերունդ՝ երկու սեռի, և՛ իբրև հօր ու մօր անմիջական սերունդ՝ արական սեռի։ Վերջին նշանակութիւնը գրաբարում ամենից յաճախ գործածվածն է։ Մեր այժմեան լեզվում այս բառի առաջին նշանակութիւնը կարելի է անհետացած համարել, իսկ երկու յաջորդ նշանակութիւնները պահպանվել են, այնպէս որ որդի թէ՛ նշանակում է արու զաւակ և թէ՛ ընդհանրապէս զաւակ անխտիր (երկու սեռի)։ Օրինակ, եթէ հարցնեն մէկին, «որդիդ ուր է»—հասկացվում է «տղադ ուր է». (հակառակ դէպքում կը հարցնէին աղջիկդ ուր է)։ Իսկ այսպիսի մի խօսքի մէջ—«քանի որդի ունես.—հինգ.—տղա՞յ, աղջիկ.—երկուսը տղայ, երեքը աղջիկ»—որդի բառը հասկացվում է երկու սեռի զաւակ իմաստով։

Ուրեմն պ. Սարիբէգ Տէր-Մելքիսեդեկեանի հարցին կարելի է պատասխանել ամփոփ կերպով այսպէս. Զաւակ, Որդի, Երեխայ բառերից ոչ մէկը չի ցոյց տալիս անպատճառ արական սեռ. սրանցից Որդի բառը ավելի կարող է հասկացվել արու զաւակի նշանակութեամբ։

Գրաբարի մէջ գոյութիւն ունէին ուտոր և դուստր բառերը, առաջինը արական և երկրորդը իգական սեռի որդի նշանակելու համար։ Առաջին բառը իսպառ անհետացել է այժմեան լեզուից, իսկ երկրորդը մասամբ։ Այս պատճառով էլ ներկայումս մենք չունենք յատուկ բառ, որ անպատճառ արական սեռի որդի նշանակէր։

Ստ. Մալխասեանց

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—o—

Արտիստական թատրոն

Շաբաթ և կիրակի, մայիսի 11-ին և 12-ին, առաջ գրամատիական խումբը, Լերեդէվի գեկավարութեամբ, ներկայացրեց Աբքուանական թատրօնում Բայրօնի «Մարդանապալ» տրագեդիան, թարգմանութեամբ Վէյնբերգի։

Ինչպէս պատմութիւնից գիտենք, Մարդանապալը Ասորեստանի և Նինուէի թագաւորն էր, որ ապրում էր IX դարում Քրիս-

տոսից առաջ և լեգենդական Շամիրամ թագուհու ցեղի վերջին շառաւիղն էր։ Պատմութեան մէջ նա յայտնի է իբրև մի շուայտ, զեղխութեան մատնված թագաւոր, և նրա օրով Ասորեստանը կործանվեց։ Թէև վերջին բռլէին Սարդանապալը ուշքի եկաւ, արիաբար կռուեց և իրան լքված տեսնելով՝ խարոյկ սարքեց և նրա մէջ մեռաւ։ Սակայն Բայրոնի տրագեդիայի մէջ Սարդանապալը դուրս է բերված իբրև մի համակրելի, խաղաղասէր և վեհ գաղափարներ ունեցող տիպ, այլ ոչ իբրև բռնակալ-արիւնախում՝ Ասորեստանի միւս թագաւորների նման։ Նա չէ կամենում հաւատալ դաւադրութիւն իր պաշտօնեաների և զօրավարների կողմից, որովհետև, ամեն տեսակ բարերարութիւններ արած լինելով նրանց, նա հնարաւոր չէ համարում այդպիսի մի սև դաւաճանութիւն։ Նա բնաւ չէ կամենում, որ իր թագաւորութեան օրով արիւն թափվի։ Նա կամենում է, որ իր բոլոր հպատակները ապրեն սիրոյ, զուարճութեան մէջ, որ պատերազմներին վերջ տրվի։ Նա ինքն կաթոգին սիրում է մի յոյն ստրկուհու՝ Միրբա անունով և կանգի նը-պատակը տեսնում է սիրոյ և վայելքի մէջ։ Սակայն երբ նա համոզվում է, որ մարդիկ չար են, արիւնախում, դաւաճաններ, նա ապիծի նման կռուում է և վերջում անարդ թշնամիների ձեռքը չընկնելու համար՝ պալատում խարոյկ է սարքում և Միրբայի հետ միասին անհետանում կրակի բոցերի մէջ։

Սարդանապալի դերը կատարում էր Ա. Թայրով (հայ, սիմֆերոպոլցի) և կատարում էր տաղանդաւոր ու շնորհալի կերպով։ Ոչ նուազ շնորհալի կերպով կատարում էր Միրբայի դերը տ. Վալերսկայան։ Միդացի Արբակի և քաղդէական մոգ Բելեզիսի դերերը կատարող Լբովը և Բախմետեվը թոյլ էին։

Դեկորացիաները շքեղ էին և համապատասխան պատմական պահանջներին։

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 10 մայիսի

Թիֆլիսի հայ-կաթոլիկաց մասրան հոգաբարձութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը Թիֆլիսաբնակ յարգելի եղբարք Ստեփան և Մկրտիչ Յարութիւնեան Քիւրքչեաններին, որոնք ի յիշատակ իրանց ողբացեալ եղբօր Յովհաննէսի նուիրեցին յիշեալ մասրան մի շքեղ դաղաղի ծածկոց 100 ռուբլի արժողութեամբ, և մի թաշեայ շուրջառ։ Նաև նուիրեցին 200 ռուբլի՝ փոխարէն հոգեհացի՝ Թիֆլիսի հայ-կաթոլիկաց եկ.-ծի. շինվելիք դպրոցի ֆոնդի օգտին։

Ի դիմաց հոգաբարձութեան՝

Մկրտիչ վ. Սրգարեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Նապօլեական կայսրի առողջական դրութիւնը անյուսալի է համարվում։

— «Рус. Молва»-ն հաղորդում է, որ յունիս ամսում ֆինլանդական ջրերում տեսակցելու են Թագաւոր Կայսրը և անգլիական թագաւորը։ Այդ տեսակցութեան ժամանակ քաղաքական հարցերի շուրջ մաքրի փոխանակութիւն են անելու արտաքին գործերի մինիստրներ Սազոնովը և Գրէյը։

— Գագրայում վախճանվեց 67 տարեկան հասակում բարդացած ինֆլուէնցայից «Р. Вѣд.»-ի խմբագիր-հրատարակիչ, յայտնի հրապարակախօս Վասիլի Միխայլովիչ Սօբոլէվսկին, որ լրագրի գլուխ կանգնեց 1881 թ.-ից։ Հանգուցեալը քիչ չէ նպաստել հայկական հարցի լուսաբանութեանը իր առաջադէմ օրաթերթի էջերում։

— Ռուսաց յայտնի գրող Լէօնիդ Անդրէեվը տկար է ինֆլուէնցայի ծանր տեսակով։

— «Рус. Знамя»-ն հաղորդում է, որ Պուրիշկէվիչը ամեն կերպ աշխատում է ստանալ ժող. լուս. մինիստրի օգնականի պաշտօնը։

— Եգիպտոսում կալանաւորվել է սոց.-դեմ. Արէնսը, որ ագիտացիա է մղելիս եղել ռուս նաւաստիների մէջ։ Ռուսաստանը պահանջում է յանձնել նրան։ Անգլիական բանաւորական կուսակցութիւնը հանդէս է գալիս ի պաշտպանութիւն Արէնսի։

— Պետերբուրգի ժող. համալսարանների ընկերութեան օգտին մի անյայտ մարդ նուիրեց 12,000 ռուբլի։

— Եկատերինօդարում բացվում է պոլիտեխնիկում։

— Սմոլենսկի նահանգապետը 5 օրով կալանաւորել է տեղական ոստիկանապետին փողոցների մաքրութեան վրա թոյլ հսկողութիւն ունենալուն համար։

— Այսօր Պետերբուրգում մինիստրների խորհուրդը քննում է Ցարիցինում թնդանօթային մանաւոր գործարան կառուցանելու նախագիծը։

— Պետական Դուման որոշեց բիւջէի քննութեան համար նիստի գումարել ամեն օր անընդհատ։ Ներքին գործերի մինիստրի նախահաշիվ քննութեան ժամանակ Մակլակովի փոխարէն հանդէս կը գայ հայազգի պատգամաւոր Աջէմեանը։

— Սեմինարիաներին առևտրական և կաղէտների դպրոցների ընթերցարաններին համալսարան ընդունելու օրինագիծը իր պարտութեամբ պարտական է կոմս Ս. Վիտտէի բերած պատճառաբանութիւններին ու վարմունքին։

— Վիէննայում սոցիալիստ պատգամաւոր Շումէյրին սպանող Կոնչակը դատապարտվեց մահվան պատժի։

— Ֆրանսիացի ծովակալ Դէբրիվի Պետերբուրգ գալը հետամուտ է ծովային դաշնագիր կնքել Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև։

— Լոնդոնում սուֆրաժիստուհիները ռումբերով կործանեցին Էդինբուրգի յայտնի արքունի դիտարանը։ Վնասները շատ խոշոր են։

— Պարիզից հեռագրում են, որ զօրքերի մէջ սկված անկարգութիւնները 3-ամեայ զինուորական ծառայութեան դէմ հետևանք եղաւ «Humanite»-ի յօդուածների։ Բոլոր ուղղութիւնների մամուլը խստագոյս դատապարտում է Ժօրէսի հակահայրենասիրական գործունէութիւնը։

— Ինչպէս հեռագրում են Վիէննայից, Սերբիայի հետ միջադէպին վերջ դնելու նպատակով Բոլգարիան դիմեց մեծ պետութիւններին՝ խնդրելով աւտօնոմիա տալ Մակեդոնիային։

— «Daily Tel.»-ը հաղորդում է, որ Սերբիայի և Յունաստանի զինուորական դաշնակցութիւնը ընդդէմ Բոլգարիայի՝ կատարված իրողութիւն է։

— Ինչպէս պարզվում է, պրինց Այրէնդրէնին վիրաւորել է «Մ. ու Ա.» կոմիտէի վարձկան անձը։ Կոմիտէի նպատակն է մէջտեղից բառնալ պրինցին, որ իր փորձառութեամբ խոչընդոտ է հանդիսանում կոմիտէի ինքնահեծան գործողութիւններին։

— Մահմուդ-Շեվքէթ-փաշան, Զաթալջայից եկած պատգամաւորութեան պահանջով հրաժարական տուէց, բայց սուլթանը, հրաժարականը չընդունեց։

— Զաթալջայում մի երիտասարդ թիւրք օֆիցէր վիրաւորեց գեներալ զօրահրամանատար Աբուբ-փաշային ձեռքից։

— Կ. Պոլսում դրութիւնը դարձել է վտանգաւոր։ Զօրքը յամառութեամբ պահանջում է Մահմուդ-Շեվքէթի հրաժարականը։ Գլուխ է բարձրացնում անգլիասէր հոսանքը։

— Բ. Դուռը կարգադրել է ռուս-թիւրքական սահմանը ուղարկել Դերմանիայից վերջերս ստացված թնդանօթները և 72 դնդակացիր։

— Սկիւտարի ռուսաց հիւպատոս Միլլէրը այլս չէ վերադառնալու իր պաշտօնատեղը։

— «Р. Молва»-ին հեռագրում են, որ Մօնաստիրում արիւնահեղ ընդհարում է տեղի ունեցել սերբ և բոլգար զօրքերի միջև։

— Կ. Պոլսից հեռագրում են, որ էկս-սուլթանի վրա սահմանված է արտակարգ հսկողութիւն, որովհետև երիտասարդ-թիւրքերը հաստատ տեղեկութիւններ ունեն, որ իրանց հակառակորդ կուսակցութիւնը վճռել է ինչ էլ որ լինի Աբդիւլին վերստին գահ բարձրացնել։

— Մեծ պետութիւնների դեսպանները նկատի առնելով Կ. Պոլսում ընդարձակվող անկարգութիւնների հնարաւորութիւնը, ձեռք են առնում հարկաւոր նախազգուշական միջոցները։

— Բէյրութի անկարգութիւնների ժամանակ վիրաւորվել է տեղական վալին։

— Կ. Պոլսից հեռագրում են, որ կոմիտէտը գլուխը կորցրած պատգամաւորութիւն ուղարկեց Բեռմիլ-փաշայի մօտ՝ խնդրելու, որ գայ և նորից գլուխ կանգնէ իշխանութեան։

— Սալար-ուդ-Դովլէն Սարիի մոտերը ջարդեց կառավարական զօրքերին և իրան յայտարարեց Մազանդարանի տէր։ Նահանգի բոլոր քաղաքներում Սալարը նահանգապետներ է նշանակել իր համախոհներից։ Մաքսատները փակ են։ Լուրերի համաձայն, Աստրաբադի ռուս հիւպատոսը կարգադրել է, որպէսզի հիւպատոսական գործակալութիւնները և ռուսաց զօրքերը արգելք չը լինեն պրինցի գործողութիւններին։

— Լիսոզեանի պրոմիսլաների թիւրքմէն ծառայողները, երես առնելով Սալար-Դովլէի աջողութիւններից, մի շարք անկարգութիւններ են արել։ Ռուսաց հիւպատոսը ուղարկեց 100 կօզակ և հետևակ վաշտ «Դեօք-Թեփէ» ռազմանաւից, որոնք և կարգ ու կանոնը վերահաստատեցին։

— Մինիստրների խորհրդի կարգադրութեամբ այս մայիսի 17-ին Բաքուում աճուրդով կապալով է տրվելու 13 դեսեատին նաւթաբեր արքունի հողաբաժին։

— Պետ. Դումայի համարեա բոլոր ֆրակցիաները ընդունում են, որ բիւջէի ապիթով կիսվցէվի արտասահման մի հաշւապահի կամ գանձապահի ճառ էր, այլ ոչ թէ պետական մարդու։

— Պետերբուրգում յամառ կերպով խօսվում է մինիստրների խորհրդի նախագահ Կոկովցէվի և արտաքին գործերի մինիստր Սազոնովի հրաժարականի մասին։

— Շանեավսկիի անուան համալսարանին կոմս Սիվէրսը կտակել է 48,000 ռուբլի։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

11 և 12 մայիսի

ԱԹԷՆԻ։ Զրամբարների աշխատանքների ժամանակ նաւահանգստում պայթեց կաթսաներից մէնը։ Սպանվեցին 12 հոգի, վիրաւորվեցին 20 բանւոր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Եկաւ եօթ հոգուց բաղկացած ամերիկեան մի պատգամաւորութիւն Ռուսաստանի գիւղատնտեսական գործի հետ ծանօթանալու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրավեց «Тр. Голосъ»-ի № 12-ը։

Վախճանվեց Սեվաստոպոլի պաշտպան պաշտօնաթող փոխ-ծովակալ Նօվօսիլսկին։

Առևտրի ու արդիւնաբերութեան ներկայացուցիչների համառուսական համագումարի աշխատանքներն աւարտվեցին։

ԳԻՆՏ։ Համաշխարհային ցուցահանդէսում հրդեհը ոչնչացրեց Տիրոլի բաժինը և Հընդկան պավիլիոնը։

ԶՐ ՀԱՍՑՎԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

11 և 12 մայիսի

Բազուից—Աւետիսովային, Իրկուտսկից—Աւետիքովին, Պերայից—Տէր-Օհանէսովին, Իրկուտսկից—Տէր-Թումասեանցին, Արտվինից—Մելիքեանցին, Գօրուց—Տէրտէրովին, Սարունչիից Բաբալովին։

Խմբագիր՝ Ա.ԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Օդօլը ներկայանում է առաջին և միակ միջոցը ատամները և բերանի խոռոչը մաքուր պահելու և ատամների փչացմանը միանգամայն յուսալի կերպով հակադրելու համար։ Անպայման այդօրինակ ներգործութիւնը հիմնաւորված է գլխաւորաբար Օդօլի յատկութեան վրա՝ թափանցել փչացած ատամների ու ընդերի լորձաթաղանթների ներսը և կործես թէ մտնել մատակարարել նրանց։

Հարկաւոր է առանձին ուշադրութիւն դարձնել Օդօլի բոլորովին ինքնայատուկ ներգործութեան վրա, այն ժամանակ, երբ ատամները և բերանի խոռոչը մաքուր պահելու համար գործադրվող բոլոր այլ միջոցները իրանց ներգործութիւնն են անում միմիայն մաքրելու պրոցէսսի ընթացքում, Օդօլը շարունակում է իր անտիսեպտիկ ներգործութիւնը էլ աւելի և շարունակաբար՝ երկար ժամերի ընթացքում, ատամները մաքրելուց յետոյ։ Օդօլը ներս է ծծվում փչացած ատամների և ընդերի լորձաթաղանթների մէջ, որոշ ատաճան նրանց մուցանում է, և բերանի խոռոչում մնացած այդ անտիսեպտիկ պաշարը պայմանաւորում է յետագայ ներգործութիւնը մի շարք ժամերի ընթացքում։ Օդօլի այդ նշանակալից յատկութիւնը յուսալի պահպանում է բերանը փտածութեան պրոցէսների զարգացումից և պահում ատամները առողջ դրութեան մէջ։

Մի սրուակի գնը 85 կ., մեծ սրուակը, որ կարող է բաւականանալ մի քանի ամիս, արժէ 1 ր. 50 կ.։

(M. 179586/179604)

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՀԱՄԲԱՒԱԲԵՐ

Փորի ուռածութիւնը, սրտի գալի տակ զգացվող ճնշվածութիւնը, թանջոցը և այրոցը «Դ-ր Մէյէրի Սոմօկսիգէնի» գործածութեան շնորհիւ նուազեցին, կաղութիւնը անցաւ։ Մայասիլը այլևս չէ անհանգստացնում, կոշտերն այլևս դուրս չեն գալիս։ Դ-ր Ցվէյտայկի։

Դեղատոմսը.—Վերցրէք մօտակայ դեղատնից կամ դեղապահեստից «Դ-ր Մէյէրի Սոմօկսիգէնից» մի տուփիկ, երկու շաբաթ բաւականացող, և ընդունէք 1—2 տարէկտակ օրական 3 անգամ, մինչև որ ձեր մարսողութիւնը կանոնաւորվի։

«Դ-ր Մէյէրի Սոմօկսիգէնը» միանգամայն անվնասակար է։ Առողջացումը կատարեալ է լինում։

(П. 66966)

(մ. 14)

(M. 132918) 2—2

ՀԻԻԱՆԴՆԵՐԻՆ

Սպէրմին-Պէլիով օգտվող հիւանդներին աշխատում են խարել մեծախոստում բէկ լամներով սերմային երկաթից պատրաստված հեղուկների մասին, ըստ որում այդ բէկլամների մէջ անամօթաբար խեղաթիւրում են փաստերը և ժամանցոյց են լինում եւրոպական գիտնականների անուան և աշխատութիւնների վրա, մինչդեռ այդ գիտնականները երբէք չեն տեսել այդ արէպարատները։ Մենք մեր պարտքն ենք համարում նախազգուշացնել հիւանդներին այդ մակաւանքներից, որովհետև նրանք՝ չունենալով ոչ մի առնչութիւն Սպէրմին-Պէլի հետ՝ շատ անգամ պարունակում են իրանց մէջ հակառողջական նիւթեր։

Նեվրասթենիայի, սեռական թուլութեան, զառամութեան, խստերիկայի, նեվրալգիայի, սակաւարիւնութեան, բոխաթի, սիֆիլիսի, սեղիկային բժշկութեան հետևանքների, սրտի բարամսմամ, պէրէոյ, միօկարդիտ հիւանդութիւնների (չաղութիւն, սրտի պնդանութիւն, սրտի բարամսմամ, պէրէոյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումի, պիսիոլիզմի, ողնաուարի հիւանդութեան, կարուածների, հիւանդութիւններից առաջացած թուլութեան, յոգնածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ միայն Սպէրմին-Պէլի գործածութեամբ կարելի է հասնել այն փայլուն հետևանքներին, որոնց մասին վկայում են ամբողջ աշխարհի յայտնի գիտնականների և բժիշկների գիտութիւնները։

Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել **ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ** անուան վրա և մերժել բոլոր մահլամները հղուկները պնդապես անուններով, որոնց անպէտքութեան մասին հրատարակված է առանձին բրոշիւր, որն ուղարկվում է ձրի՝ Սպէրմինի մասին եղած նորագոյն գրականութեան հետ միասին։

ՍՊԷՐՄԻՆ ՊԷԼԻՆ ԿԱՐԵ Ի Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԲՈԼՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ ԵՒ ԴԵՂԱՎԱՃԱՌ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ,

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-ья

Поставщини Двора

ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА

С.-ПЕТЕРБУРГЪ.

(П. 69718) 12 2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուվիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամենօր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Գ. Մ. ԶԻՒՕՂԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱՐԱՆՈՒՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Ց. ՄՈՒՐԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՅԷՐ-ԳԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Օ. Վ. ԴԷԼՎԻԱՆԱՑ-ԷՆԴԷԼ—6—7 ժ մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Ռ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆՑ

1. 0—50

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ իրաւունքներով

Հայրապետական Կուրսեր

ամարային պարապմունքներով

ՅՈՎՀ. ԶԱԲ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Ընդունելութեան քննութիւնները մայիսի 30-ին և 31-ին։

I Թումանովսկայա փ. սեփ. տ. № 13 (առ. ժ. 9—2-ը)։ Միխայլովսկի պր. № 53 (երեկ. ժ. 6—8-ը)։

ա.հ.կ. 382. 10—1

ՕԳՏՎԵՑԻՔ ԴԻՊՔԻՑ

Վաճառվում են **Յ. Դաղբաշեանի** բառարանների

ՎԵՐՋԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

ՌՈՒՍ-ՀԱՅ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ գինը 8 ր., կազմած 9 ր.։

ՀԱՅ-ՌՈՒՍ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌ., գինը 6 ր. կազմած 6 ր. 50 կ.։ Երկու բառարանները միասին 12 ր.։ Ճանապարհածախսը հեղինակի վրա։ Դիմել՝ Հ. Դաղբաշեան. Корганосская ул. № 9. кв. 2 Въ г. Тифлисъ.

ե. շ. 383. 10—1

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Զեռնարկ Հայոց Պատմութեան

Մինչև դար (300—1400 թ.)

ՆՈՐԱԳՈՅՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ

Բովանդակութիւն.—«Քրիստոնէութիւն», «Ներս մուտքն ի Հայաստան», «Քրիստոնեայ և հեթանոս կուսակցութիւնների պայքարը և Արշակունեաց հարստութեան անկումը», «Ոսկէ դար և կրօնական պատերազմներ», «Ինքնավար Հայաստան», «Արարներ և մահմեդականութիւն», «Հայաստան արաբական իշխանութեան տակ», «Բագրատունիք և վրացիներ», «Սելջուկներ և թաթարներ», «Հայաստանի անկումը», «Կիլիկիա», «Ռուբինեանք, Լեթումեանք և Լուսինեանք», «Կիլիկիայի հայոց կուլտուրական կեանքը»։

Տ. Տէր-Գրիգորեանց

204 երես, գինն է 55 կ.

Հայցէն՝ Баку, Армянское женск. «Рипсимянъ» училище.

(օ.մ.) 376. 3—2

ՊԵԱՏԻԳՕՐԱԿԻ հայոց եկեղեցու երգեցիկ խմբի համար հարկաւոր է

ԽՄԲԱՊԵՏ

50 ռուբլի ռոճիկ և սենեակ։ Ցանկացողները կարող են դիմել Գ. Սուքիասեանցին։

(շ.կ.ե.) 368. 4—4

Լոյս տեսաւ Պետերբուրգի հայ ուսանողութեան հրատարակութեամբ

„ՇՈՂԵՐ“

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Բովանդակութիւն

I. Գրական-գեղարուեստական բաժին. 1) Անտառը վրդովված էր, Դ. Դեմիրճեան. 2) Տինչա. բան., Նիկ. Քեալաշեան. 3) Կարօտ, Գ. Նազարեան. 4) Երազ, Գ. Նազ. 5) ***բան., Հ. Մազմանեան. 6) *** բան., Յակ. Այվազեան. 7) Սէգա, Գ. Մեսեան. 8) Թախիծ. բան., Մենուհի. 9) *** բան., Հրանդ-Հայբար. 10) Գայլանէ, Կար. Միքայէլեան. 11) *** բան., Յակ. Այվազեան. 12) *** բան., Հ. Մազմանեան. 13) *** բան., Հ. Մազմանեան. 14) Լիւսի, Ար. Յովհաննիսեան. 15) *** բան., Գ. Նազարեան. 16) *** բան., Յ. Խանլարեան, 17) *** բան., Լէյլի. 18) Ճանապարհ վրայ, բան., Սիմ. Առաքելեան. 19) *** բան., Նիկ. Քեալաշեան. 20) *** բան., Գ. Մեսեան։

II. Գրական-քննադատական բաժին. 21) Մուրացանը որպէս մտածող և գեղագէտ, Արսէն Տէրտէրեան. 22) Հոգեհիւանդանական տարրերը Շերվանզադէ գրուածքներում, Ե. Ղարիբեան։

344 երես, գինը՝ Մէկ ռուբ.։ Դիմել Կովկասի հայ գրավաճառներին։

Ժողովածուի մէջ տեղ գտած բոլոր նիւթերը վարձատրվում են։ Խնդրում ենք հեղինակներին ուղարկել խմբագրութեան իրանց ճիշդ հասցէները։

Զը տրված նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախք՝ նամականիշներով մինչև մայիսի 20-ը։ Հասցէն՝ СПБ., Хрустальная 20, кв. 4. Г. Месяну.

325. 5—5

(ե.շ.)

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный